# ԱՒԵՏԱՐԱՆ
# ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ
# ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

## ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ

Յոյն բնագրից թարգմանուած

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԻ ԲՐԻՏԱՆԱԿԱՆ
ԵՒ ԱՐՏԱՔԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԾԱԽՍՈՎԸ

ԹԻՖԼԻՍ
Տպարան «ԷԿՕՆՕՄԻԱ» Ա. Մահտեսի-Յակոբեանցի
1916

741 Ե.Տ.Մ.

# ԱՒԵՏԱՐԱՆ

# ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ
# ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ

Յոյն բնագրից թարգմանուած

*ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԻ ԲՐԻՏԱՆԱԿԱՆ*
*ԵՒ ԱՐՏԱՔԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԾԱԽՍՈՎԸ*

---

*ԹԻՖԼԻՍ*

*Տպարան «ԷԿՕՆՕՄԻԱ» Ա. Մաճառով-Յակոբեանցի*
1916

Евангеліе отъ Іоанна на Арарат-Армянскомъ языкѣ

ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ

# ԱՒԵՏԱՐԱՆ

## ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ

### ԳԼՈՒԽ Ա.

1 Սկզբումն էր Բանը. և Բանն Աստուծոյ մօտ էր.
2 և Բանն Աստուած էր: Նա սկզբումն Աստուծոյ
3 մօտ էր: Ամեն ինչ Նորանով եղաւ, և առանց Նո-
4 րան ոչինչ չ'եղաւ, ինչ որ եղաւ: Նորանով էր
5 կեանքը, և կեանքը մարդկանց լոյսն էր: Եւ լոյսը
խաւարումը լոյս է տալիս. և խաւարը չ'իմացաւ
նորան:
6 Մի մարդ եղաւ Աստուածանից ուղարկուած,
7 անունը Յովհաննէս: Նա վկայութեան համար ե-
կաւ, որ այն Լոյսի համար վկայէ, որ ամենքը Նո-
8 րանով հաւատան: Նա չէր Լոյսը, այլ որ Լոյսին
համար վկայէ:
9 Այն էր ճշմարիտ Լոյսը, որ ամեն մարդի լուսա-
10 ւորում է, որ գալիս է աշխարհք: Աշխարհքումն
էր, և աշխարհքը Նորանով եղաւ, և աշխարհքը
11 Նորան չ'ճանաչեց: Իրանների մէջ եկաւ, և իրան-
12 ները նորան չ'ընդունեցին: Բայց որոնք որ Նորան
ընդունեցին, իշխանութիւն տուաւ Նորանց Աստու-
ծոյ որդիներ լինելու՝ նորանց, որ Նորա անունին
13 հաւատում են: Որոնք ոչ արիւնից և ոչ մարմնի
կամքից, և ոչ մարդի կամքից. այլ Աստուածանից
14 ծնուեցան: Եւ Բանը մարմին եղաւ և բնակուեց

մեր մէջ. և Նորա փառքը տեսանք՝ ինչպէս Հօրից
եղած միածնի փառք՝ շնորհքով և ճշմարտութիւ-
նով լիքը։
15 Յովհաննէսը վկայում է Նորա համար. և աղա-
ղակեց եւ ասաց. Սա էր, որի համար ասում էի,
թէ Ինձանից յետոյ եկողը ինձանից առաջ եղաւ.
16 որովհետեւ ինձանից առաջ էր։ Եւ Նորա լիութիւ-
նից մենք ամենքս առանք շնորհք շնորհքի տեղ։
17 Որովհետեւ օրէնքը Մովսէսի ձեռովը տրուեցաւ.
շնորհքը եւ ճշմարտութիւնը Յիսուս Քրիստոսի ձե-
18 ռովն եղաւ։ Աստուծուն ոչ ով երբէք չէ տեսել.
բայց միածին Որդին, Հօր ծոցումը լինողը, Նա
պատմեց.
19 Եւ այս է Յովհաննէսի վկայութիւնը, երբոր
Հրէաներն Երուսաղէմից քահանաներ եւ Ղեւտացի-
ներ ուղարկեցին Նորա մօտ, որ հարցնեն նորան. թէ
20 Դու ո՞վ ես։ Եւ նա խոստովանեց եւ չ'ուրացաւ,
21 եւ խոստովանեց, թէ Ես չեմ Քրիստոսը։ Եւ նո-
րան հարցրին. Ապա ո՞վ, Եղիա՞ն ես. եւ նա ասաց.
Չեմ մարգարէ՞ն ես դու. եւ նա պատասխանեց.
22 Ոչ։ Արդ ասացին նորան. Ապա ո՞վ ես, որ պա-
տասխան տանք մեզ ուղարկողներին. ի՞նչ ես ա-
23 սում քեզ համար։ Ասաց. Ես եմ անապատումը
կանչողի ձայնը, թէ ուղղեցէք Տիրոջ ճանապարհը,
24 ինչպէս Եսայիա մարգարէն ասաց։ Եւ ուղարկուած-
25 ները Փարիսեցիներիցն էին։ Եւ նորան հարցրին եւ
ասացին. Ապա ինչու ես մկրտում, եթէ դու ոչ
26 Քրիստոսն ես եւ ոչ Եղիան, եւ ոչ մարգարէն։ Յով-
հաննէսը պատասխանեց նորանց եւ ասաց. Ես ջրով
եմ մկրտում. բայց ձեր մէջումը կայ մէկը, որին
27 դուք չ'գիտէք։ Նա է ինձանից յետոյ եկողը, որ
ինձանից առաջ եղաւ. որ ես արժանի չեմ նո-
28 րա կօշիկների կապը արձակելու։ Սա Բեթարա-



բայումն եղաւ, Յորդանանի այն կողմին, ուր որ Յով-
հաննէսը մկրտում էր։
29 Հետեւեալ օրը Յովհաննէսը տեսնում է Յիսու-
սին իրան մօտ գալիս, և ասում է. Ահա Աստու-
ծոյ Գառը, որ վեր է առնում աշխարհքի մեղքը։
30 Սա է, որի համար ես ասում էի, թէ Ինձանից յե-
տոյ մի մարդ է գալիս, որ ինձանից առաջ եղաւ,
31 որովհետեւ ինձանից առաջ էր։ Եւ ես Նորան չ'գի-
տէի. այլ որ Նա յայտնի լինի Իսրայէլին, նորա
32 համար ես եկայ ջրով մկրտելու։ Եւ վկայեց Յով-
հաննէսը եւ ասաց, թէ Տեսնում էի Հոգին, որ ա-
ղաւնու պէս վայր էր գալիս երկնքից և Նորա վե-
33 րայ մնում։ Եւ ես չ'գիտէի Նորան. բայց Նա որ
ինձ ուղարկեց ջրով մկրտելու, Նա ասաց ինձ, թէ
Որի վերայ որ տեսնես Հոգին վայր է գալիս եւ Նո-
րայ վերայ մնում, Նա է Սուրբ Հոգով մկրտողը։
34 Եւ ես տեսայ եւ վկայեցի, թէ Սա է Աստուծոյ
Որդին։
35 Հետեւեալ օրը դարձեալ կանգնած էր Յովհան-
36 նէսը, եւ նորա աշակերտներից երկուսը։ Եւ մտիկ
տուաւ Յիսուսին, որ ման էր գալիս, եւ ասաց. Ահա
37 Աստուծոյ Գառը։ Եւ այն երկու աշակերտները
լսեցին Նորանից՝ որ խօսում էր, եւ գնացին Յիսու-
38 սի ետեւից։ Յիսուսն էլ դարձաւ նորանց տեսաւ,
որ գնում էին իր ետեւից, եւ ասաց նորանց. Ի՞նչ
էք ուզում. նորանք ասացին նորան. Ռաբբի, (որ
թարգմանուած ասվում է՝ վարդապետ.) ո՞րտեղ
39 ես կենում։ Նորանց ասաց. Եկէք եւ տեսէք. եկան
եւ տեսան թէ որտեղ էր կենում. եւ այն օրը նորա
40 մօտ մնացին. ժամն էլ տասի մօտ էր։ Անդրէասը՝
Սիմօն Պետրոսի եղբայրն՝ այն երկուսից մէկն էր,
որ Յովհաննէսից լսեցին եւ նորա ետեւից գնացին։
41 Սա առաջ գտնում է իր Սիմօն եղբօրն եւ նորան

ասում. Մեսիան գտել ենք. (որ թարգմանվում է
42 * Քրիստոս): Եւ բերաւ նորան Յիսուսի մօտ. Յի-
սուսն էլ նորան մտիկ տուաւ և ասաց. Դու Սի-
մօնն ես՝ Յովնանի որդին. դու պիտի կոչուիս Կե-
փաս, (որ թարգմանվում է **Պետրոս):
43 Հետեւեալ օրը կամեցաւ Յիսուսը դուրս գնալ
Գալիլեա. և գտնում է Փիլիպպոսին, և ասում
44 նորան. Իմ ետեւից եկ: Փիլիպպոսն էլ Բեթսայի-
դայեցն էր, Անդրէասի և Պետրոսի քաղաքիցը:
45 Փիլիպպոսն էլ գտնում է Նաթանայէլին և ասում
նորան. Նա որի մասին գրեց Մովսէսն օրէնքումը,
և մարգարէներն էլ, գտանք՝ Յովսէփի որդի Յիսու-
46 սին Նազարէթիցը: Եւ Նաթանայէլը նորան ասաց.
Կարելի՞ է որ Նազարէթիցը մի բարի բան լինի.
47 Փիլիպպոսը նորան ասաց. Եկ և տես: Յիսուսը տե-
սաւ Նաթանայէլին իրան մօտ գալիս՝ և ասաց նո-
րա համար. Ահա ճիշտ Իսրայէլացի, որի մէջ նեն-
48 գութիւն չ'կայ: Նաթանայէլն ասում է նորան.
Ի՞նչ տեղից ես ճանաչում ինձ: Յիսուսը պատաս-
խանեց և ասաց նորան. Փիլիպպոսը դեռ քեզ չը
49 կանչած քեզ տեսայ որ թզենու տակն էիր: Նա-
թանայէլը պատասխանեց և ասաց. Ռաբբի, դու
Աստուծոյ Որդին ես. դու ես Իսրայէլի թագաւո-
50 րը: Յիսուսը պատասխանեց և ասաց նորան. Որով-
հետեւ ես ասացի քեզ, թէ թզենու տակ տեսայ
քեզ, հաւատո՞ւմ ես. սորանցից էլ աւելի մեծ
51 **բաներ** կ'տեսնես: Եւ նորան ասաց. Ճշմարիտ ճըշ-
մարիտ ասում եմ ձեզ, այսուհետեւ կ'տեսնէք
երկինքը բացուած, և Աստուծոյ հրեշտակներին
մարդի Որդու վերայ ելնելիս և իջնելիս:

---

***Այսինքն՝** Օծեալ: ** **Այսինքն՝** վէմ:



## ԳԼ. Բ.

1 Եւ երրորդ օրը հարսանիք էր Գալիլեայի Կանա-
2 յումը, և Յիսուսի մայրն այնտեղ էր: Յիսուսն էլ
կանչուեցաւ այն հարսանիքը և նորա աշակերտ-
3 ներն էլ: Եւ երբոր գինին պակասեց, Յիսուսի
4 մայրն ասաց նորան. Գինի չ'ունին: Յիսուսը նորան
ասաց. Քեզ ինչ բան կայ ինձ հետ, կին. իմ ժա-
5 մանակը դեռ չէ հասել: Նորա մայրն ասաց սպա-
6 սաւորներին. Ինչ որ ասէ ձեզ, արէք: Այնտեղ
վեց քարէ կարասներ կային Հրէաների մաքրուելու
համար, որոնցից ամեն մէկը երկու կամ երեք մար
7 էին տանում: Յիսուսը նորանց ասաց. Այդ կա-
րասները ջրով լցրէք, և նորանց լցրին մինչև վերը:
8 Եւ նորանց ասաց. Հիմա առէք և տարէք սեղանա-
9 պետին. և նորանք տարան: Եւ երբոր վերակացուն
այն գինի դառած ջուրը ճաշակեց, (և չ'գիտէր
թէ ինչ տեղից է. բայց սպասաւորները գիտէին՝ որ
ջուրը լցրել էին) սեղանապետը փեսային կանչեց,
10 Եւ նորան ասաց. Ամեն մարդ առաջ լաւ գինին է
տալիս. և երբոր արբենան, այն ժամանակ վատը.
11 դու լաւ գինին մինչև հիմա պահեցիր: Նշանների
սկիզբը Յիսուսն այս արաւ Գալիլեայի Կանայումը.
և իր փառքը յայտնեց, և նորա աշակերտները
հաւատացին նորան:
12 Սորանից յետոյ Յիսուսն իջաւ Կափառնայում,
ինքն և իր մայրը և իր եղբայրները և իր աշակերտ-
ները. և շատ օրեր չ'մնացին այնտեղ:
13 Եւ Հրէաների զատիկը մօտ էր, և Յիսուսը ելաւ
14 Երուսաղէմ: Եւ տաճարումը գտաւ եզներ եւ ոչ-
խարներ եւ աղաւնիներ ծախողներին, եւ սեղանա-
15 ւորներին նստած. Եւ չուանից խարազան շինեց. եւ

ամենքին տաճարիցը դուրս հանեց՝ ոչխարներն էլ և
եզներն էլ, եւ սեղանաւորների պղինձները ցրուեց
16 եւ տախտակները կործանեց: Եւ աղաւնի ծախող-
ներին ասաց, Դորանց վեր առէք այստեղից. իմ
17 Հօր տունը մի շինէք առեւտուրի տուն: Եւ նորա
աշակերտները յիշեցին, թէ գրուած է. Քո տան
նախանձը կերաւ ինձ:
18 Արդ Հրէաները պատասխանեցին եւ ասացին նո-
րան. Ի՞նչ նշան ես ցոյց տալիս մեզ, որ անում ես
19 այդ: Յիսուսը պատասխանեց եւ ասաց նորանց.
Քանդեցէք այդ տաճարը, եւ երեք օրում կ՚կանգ-
20 նեցնեմ նորան: Հրէաներն էլ ասացին. Այս տա-
ճարը քառասունեւվեց տարում շինուեցաւ, եւ դու
21 երեք օրումը կ՚կանգնեցնե՞ս զորան: Բայց նա իր
22 մարմնի տաճարի համար էր ասում: Արդ երբոր
նա մեռելների միջից յարութիւն առաւ, նորա ա-
շակերտները յիշեցին, թէ նա ասաց նորանց այս
բանը. եւ հաւատացին գրքին՝ եւ այն խօսքին որ
ասաց Յիսուսը:
23 Եւ երբոր Երուսաղէմումն էր զատկի տօնին, շատ
մարդիկ հաւատացին նորա անուանը, տեսնելով
24 նորա այն նշանները, որ անում էր: Բայց Յիսուս
ինքն իր անձը չէր հաւատում նորանց. որովհետեւ
25 ինքն ամենը գիտէր: Եւ որովհետեւ պէտք չէր որ
մէկը վկայէր մարդի համար. որովհետեւ ինքը գի-
տէր թէ ինչ կար մարդումը:

ԳԼ. Գ.

1 Եւ Փարիսեցիներիցը մի մարդ կար՝ անունը Նի-
2 կոդեմոս՝ Հրէաների իշխան: Սա գիշերը Յիսուսի
մօտ եկաւ եւ ասաց նորան. Ռաբբի, գիտենք որ
Աստուածանից վարդապետ ես եկել. որովհետեւ



ոչ ով չէ կարող այդ նշաններն անել՝ որ դու ես
3 անում, եթէ Աստուած նորա հետ չ՚լինի: Յիսուսը
պատասխանեց եւ ասաց նորան. Ճշմարիտ ճշմարիտ
ասում եմ քեզ. Եթէ մէկը վերստին չ՚ծնուի, կա-
4 րող չէ Աստուծոյ արքայութիւնը տեսնել: Նիկո-
դեմոսը նորան ասաց. Մարդ ինչպէս կարող է ծըն-
ուիլ՝ որ ծեր է. միթէ կարող է երկրորդ անգամ
5 իր մօր արգանդը մտնել եւ ծնուիլ: Յիսուսը պա-
տասխանեց. Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ քեզ.
Եթէ մէկը Ջրից եւ Հոգուց չ՚ծնուի, նա կարող չէ
6 Աստուծոյ արքայութիւնը մտնել: Մարմնիցը ծըն-
ուածը մարմին է. եւ Հոգուցը ծնուածը հոգի է:
7 Մի զարմանար՝ որ ասացի քեզ, թէ Պէտք է ձեզ
8 վերստին ծնուիլ: Քամին որտեղ ուզում է՝ փչում
է, եւ նորա ձայնը լսում ես. բայց չ՚գիտես թէ ո՞ր
տեղից է գալիս եւ ո՞ր տեղ է գնում. այսպէս է
9 ամեն Հոգուցը ծնուածը: Նիկոդեմոսը պատասխա-
նեց եւ ասաց նորան. Այս ինչպէս կարող է լինել:
10 Յիսուսը պատասխանեց եւ ասաց նորան. Դու ես
11 Իսրայէլի վարդապետը, եւ այս չ՚գիտե՞ս: Ճշմարիտ
ճշմարիտ ասում եմ քեզ, թէ ինչ որ գիտենք՝
խօսում ենք, եւ ինչ որ տեսանք՝ վկայում ենք. և
12 մեր վկայութիւնը չէք ընդունում: Եթէ երկրա-
ւոր բաներ ասացի ձեզ, եւ չէք հաւատում, ապա
ինչպէս կ՚հաւատաք, եթէ երկնաւոր բաներն ա-
13 սեմ: Եւ ոչ ոք վեր չ՚ելաւ երկինքը, եթէ ոչ եր-
կնքից իջնողը՝ մարդի Որդին՝ նա որ երկնքումն է:
14 Եւ ինչպէս Մովսէսն օձը բարձրացրեց անապատու-
մը, այնպէս պէտք է մարդի Որդուն բարձրացուիլ.
15 Որ ամեն նորան հաւատացողը չ՚կորչի, այլ յա-
16 ւիտենական կեանքն ունենայ: Որովհետեւ Աստ-
ուած այնպէս սիրեց աշխարհքը, որ իր միածին Որ-
դին տուաւ, որ ամեն նորան հաւատացողը չ՚կոր-

17 չի, այլ յաւիտենական կեանքն ունենայ։ Որովհե-
տեւ Աստուած իր Որդին չ՚ուղարկեց աշխարհք,
որ աշխարհքին դատէ, այլ որ աշխարհքը նորանով
18 փրկուի։ Նորան հաւատացողը չի դատապարտուիլ,
իսկ չ՚հաւատացողն արդէն դատապարտուած է.
որովհետեւ չ՚հաւատաց Աստուծոյ միածին Որդու
19 անունին։ Եւ սա է դատաստանը, որ լոյսն եկաւ
աշխարհք, և մարդիկ խաւարն աւելի սիրեցին
քան թէ լոյսը, որովհետև նորանց գործերը չար
20 էին։ Որովհետեւ ամեն չար գործողը ատում է լոյ-
սին, և չէ գալիս դէպի լոյսը, որ նորա գործերը չը
21 յանդիմանուին։ Իսկ ճշմարտութիւն գործողը գա-
լիս է դէպի լոյսը, որ նորա գործերը յայտնուին,
որ Աստուծով գործուեցան։

22 Սորանից յետոյ եկաւ Յիսուսը և նորա աշակերտ-
ները Հրէաստանի երկիրը. և այնտեղ նորանց հետ
23 մնում՝ և մկրտում էր։ Եւ Յովհաննէսն էլ Այե-
նոնումն էր մկրտում՝ Սաղէմի մօտ. որովհետեւ
այնտեղ շատ ջուր կար. և գալիս էին և մկրտվում
24 էին։ Որովհետեւ Յովհաննէսը դեռ բանտի մէջ չէր
գցուած։

25 Արդ Յովհաննէսի աշակերտները Հրէաների հետ
26 վէճ ունեցան մաքրութեան համար։ Եւ Յովհան-
նէսի մօտ եկան և ասացին նորան. Ռաբբի, նա որ
Յորդանանի այն կողմումն էր քեզ հետ, որի հա-
մար դու վկայեցիր, ահա նա մկրտում է, և ա-
27 մենքը նորա մօտ են գալիս։ Յովհաննէսը պատաս-
խանեց և ասաց. Մարդ չէ կարող ոչինչ վեր առ-
28 նել, եթէ երկնքից տրուած չ՚լինի նորան։ Դուք
ինքներդ վկայում էք ինձ համար, որ ասացի ձեզ,
թէ Ես Քրիստոսը չեմ, այլ թէ նորա առաջից
29 ուղարկուած եմ։ Հարսն ունեցողն է փեսայ. բայց
փեսայի բարեկամը, որ կանգնած է և լսում է նո-



րան, ուրախութիւնով ուրախանում է փեսայի
ձայնի համար. արդ իմ այս ուրախութիւնը լցը-
30 ուած է։ Նորան պէտք է աճել, և ինձ փոքրա-
31 նալ։ Վերեւից եկողն ամենից վեր է. երկրից
լինողը երկրից է և երկրից է խօսում. երկնքից
32 եկողն ամենից վեր է. Ինչ որ տեսաւ և լսեց, նա
է վկայում. և նորա վկայութիւնը ոչ ով չէ ըն-
33 դունում։ Նորա վկայութիւնն ընդունողը կնքեց,
34 թէ Աստուած ճշմարիտ է։ Որովհետեւ նա, որին
Աստուած ուղարկեց, Աստուծոյ բանն է խօսում.
որովհետեւ Աստուած Հոգին չափով չէ տալիս։
35 Հայրը սիրում է Որդուն, և ամեն բան նորա ձեռն
36 է տուել։ Որդուն հաւատացողը յաւիտենական
կեանք ունի. իսկ Որդուն չ՚հնազանդողը կեանքը
չի տեսնիլ, այլ Աստուծոյ բարկութիւնը մնում է
նորա վերայ։

## ԳԼ. Դ.

1 Եւ երբոր Տէրն իմացաւ, որ Փարիսեցիները լսե-
ցին, թէ Յիսուսը աւելի աշակերտներ է անում և
2 մկրտում քան թէ Յովհաննէսը, (Թէպէտև Յի-
սուսը ինքը չէր մկրտում՝ այլ նորա աշակերտները,)
3 Հրէաստանի Երկիրը թողեց և դարձեալ եկաւ Գա-
4 լիլեա։ Եւ պէտք էր որ Սամարիայի միջովն անցնէր։
5 Արդ նա Սամարիայի մի քաղաքն եկաւ, անունը
Սիւքար, այնտեղի մօտ, որ Յակոբը տուաւ իր
6 որդի Յովսէփին։ Եւ Յակոբի մի աղբիւրը կար
այնտեղ. և Յիսուսը ճանապարհից վաստակած
այն աղբիւրի վերայ նստեց. և ժամը վեցին դէմ էր։
7 Արդ Սամարիայից մի կին եկաւ, որ ջուր հանէ։
8 Յիսուսը նորան ասաց. Ինձ ջուր տուր խմեմ։ Որով-
հետեւ նորա աշակերտները քաղաքն էին գնացել,

9 որ կերակուր առնեն: Սամարացի կինն էլ ասաց
նորան. Դու որ Հրէայ ես, ինչպէս ես ինձանից
ջուր ուզում խմել, որ մի Սամարացի կին եմ. ո-
րովհետեւ Հրէաները չեն խառնվում Սամարացինե-
10 րի հետ: Յիսուսը պատասխանեց և ասաց նորան.
Եթէ Աստուծոյ պարգեւը գիտենայիր, և թէ ով է
նա, որ քեզ ասում է, թէ Տուր ինձ խմել, ապա
դու նորանից կ'խնդրէիր, եւ նա կենդանի ջուր կը
11 տար քեզ: Կինը նորան ասաց. Տէր, դու դոյլ էլ
չ'ունիս, և հորը խոր է. ապա որտեղից ունիս կեն-
12 դանի ջուրը: Միթէ դու աւելի մեծ ես քան մեր
հայր Յակոբը, որ այս հորը տուաւ մեզ. և ինքը
սորանից խմեց, և նորա որդիքը և նորա անասուն-
13 ները: Յիսուսը պատասխանեց և ասաց նորան. Ա-
մեն այդ ջրիցը խմողը դարձեալ կ'ծարաւի. բայց
ով որ խմէ այն ջրիցը, որ ես կ'տամ նորան, նա
14 յաւիտեան չի ծարաւիլ: Այլ այն ջուրը, որ ես
կ'տամ նորան, ջրի աղբիւր կ'լինի նորանում, որ
15 յաւիտենական կեանքի համար կ'բղխէ: Կինը նո-
րան ասաց. Տէր, տուր ինձ այն ջուրը, որ չ'ծարա-
16 ւիմ, և չ'գամ այստեղ ջուր հանելու: Յիսուսը
նորան ասաց. Գնա կանչիր քո մարդին, և եկ այս-
17 տեղ: Կինը պատասխանեց և ասաց. Ես մարդ չ'ու-
նիմ: Յիսուսը նորան ասաց. Լաւ ասացիր թէ Մարդ
18 չ'ունիմ. Որովհետեւ դու հինգ մարդ ես ունեցել,
և նա որ հիմա ունիս, քո մարդը չէ. դա ճշմարիտ
19 ասացիր: Կինը նորան ասաց. Տէր, տեսնում եմ որ
20 դու մարգարէ ես: Մեր հայրերը այս սարումը եր-
կրպագութիւն արին. և դուք ասում էք, թէ
Երուսաղէմումն է այն տեղը, ուր պէտք է երկր-
21 պագութիւն անել: Յիսուսը նորան ասաց. Կին,
հաւատա ինձ. որ ժամանակ կ'գայ, որ այն ժա-
մանակ ոչ այս լեռնումն կերկրպագէք Հօրը և ոչ



22 էլ Երուսաղէմումը: Դուք երկրպագում էք նո-
րան, որ դուք չ'գիտէք մենք երկրպագում ենք
նորան, որ գիտենք. որովհետեւ փրկութիւնը Հրէա-
23 ներիցն է: Բայց ժամանակ կ'գայ, և հիմա է, որ
ճշմարիտ երկրպագողները հոգով և ճշմարտու-
թիւնով կ'երկրպագեն Հօրը, որովհետեւ Հայրն էլ
24 այսպէս է ուզում իր երկրպագողներին: Աստուած
Հոգի է. և նորան երկրպագողները պէտք է հոգով
25 և ճշմարտութիւնով երկրպագեն: Կինն ասաց նո-
րան. Գիտեմ, որ Մեսիան պիտի գայ [որ Քրիստոս
է կոչվում]. երբոր նա կ'գայ, ամեն բան կ'պատմէ
26 մեզ: Յիսուսը նորան ասաց. Ես եմ, որ քեզ հետ
27 խօսում եմ: Եւ սորա վերայ եկան նորա աշա-
կերտները, և զարմանում էին, որ կնկայ հետ խօ-
սում էր. բայց ոչ ոք չ'ասաց. Ինչ ես ուզում,
28 կամ ինչ ես խօսում դորա հետ: Կինն էլ իր
կուժը թողեց, և գնաց քաղաք, և մարդկանց ա-
29 սաց. Եկէք տեսէք մի մարդ, որ ինձ ասաց բոլորը
30 ինչ որ գործել եմ. արդեօք նա՞ է Քրիստոսը: Եւ
դուրս եկան քաղաքիցը, և նորա մօտ էին գալիս:
31 Եւ այն միջոցին աշակերտները խնդրում էին նո-
32 րան և ասում. Ռաբբի, կեր: Նա էլ ասաց նորանց.
Ես կերակուր ունիմ ուտելու, որ դուք չ'գիտէք:
33 Աշակերտներն էլ իրար ասում էին. Արդեօ՞ք մի
34 մարդ դորան բան բերաւ ուտելու: Յիսուսն ասաց
նորանց. Իմ կերակուրս սա է, որ ինձ ուղարկողի
35 կամքն անեմ, և նորա գործը կատարեմ: Միթէ
դուք չէք ասում, թէ Դեռ չորս ամիս կայ, և
հունձքը կ'գայ. ահա ես ասում եմ ձեզ. Բարձ-
րացրէք ձեր աչքերը, և տեսէք արտերը. որ սպի-
36 տակացել են և արդէն հնձին հասել: Եւ հնձողը
վարձք է առնում, և յաւիտենական կեանքի մէջ
պտուղ ժողովում. որ սերմողը և հնձողը իրար

37 հետ ուրախանան: Որովհետեւ սորանում ճշմարիտ
է այն խօսքը, թէ Ուրիշ է սերմողը, և ուրիշ է
38 հնձողը: Ես ուղարկեցի ձեզ հնձել այն, որ դուք
չ'աշխատեցիք. ուրիշներն աշխատեցին, և դուք
նորանց աշխատանքի մէջը մտաք:
39 Եւ Սամարացիներէ այն քաղաքից շատերը հա-
ւատացին նորան այն կնկայ խօսքերի համար, որ վը-
կայում էր, թէ Ասաց ինձ բոլորը, ինչ որ գործել
40 էի: Արդ երբոր Սամարացիները նորա մօտ եկան,
նորան աղաչեցին, որ իրանց մօտ մնայ. և երկու օր
41 մնաց այնտեղ: Եւ էլ շատերը հաւատացին **Նորան**՝
42 նորա խօսքի համար: Եւ այն կնկան էլ ասում էին,
թէ Այլ եւս քո խօսքերի պատճառով չենք հաւա-
տում. որովհետև մենք ինքներս լսեցինք, և գի-
տենք որ ճշմարտապէս սա է աշխարհի Փրկիչը
Քրիստոսը:
43 Եւ երկու օրից յետոյ այն տեղից դուրս եկաւ
44 գնաց Գալիլեա: Որովհետեւ Յիսուսն ինքը վկայեց,
թէ Մարգարէն իր հայրենիքումը պատիւ չունի:
45 Բայց երբոր Գալիլեա եկաւ, Գալիլեացիներն ըն-
դունեցին նորան, տեսնելով այն բոլորն, որ տօնին
արաւ Երուսաղէմումը. որովհետև նորանք էլ ե-
կել էին այն տօնին:
46 Եւ Յիսուսը դարձեալ եկաւ Գալիլեայի Կանան,
ուր ջուրը գինի արաւ. մի *ազնուական մարդ
կար, որի որդին Կափառնայումի մէջ հիւանդ էր:
47 Նա լսելով թէ Յիսուսը Հրէաստանից եկել է
Գալիլեա, եկաւ նորա մօտ և աղաչում էր, որ իջ-
նէ և իր որդուն բժշկէ. որովհետեւ մեռնելու մօտ
48 էր. Յիսուսն էլ նորան ասաց. Եթէ նշաններ և
49 հրաշքներ չ'տեսնէք՝ չէք հաւատալ: Ազնուականը

*Կամ թագաւորի պաշտօնեայ



նորան ասաց. Տէր, իջիր դեռ քանի որ չէ մեռել
50 երեխաս: Յիսուսը նորան ասաց. Գնա, քո որդին
կենդանի է. և մարդը հաւատաց այն խօսքին, որ
51 Յիսուսը նորան ասաց, և գնաց: Եւ դեռ որ իջ-
նում էր, նորա ծառաները նորան դիմաւորեցին և
աւետիս տուին և ասացին, թէ Քո տղան կենդանի
52 է: Նա էլ նորանց հարցնում էր այն ժամի հա-
մար, որ նորանում սկսեց լաւանալ. և նորան ա-
սացին, թէ Երէկ ժամը եօթին տենդը թողեց նո-
53 րան: Այն ժամանակ հայրն իմացաւ, թէ նոյն ժա-
մին է, որ Յիսուսը նորան ասաց, թէ Քո որդին կեն-
դանի է. և հաւատաց ինքը և նորա բոլոր տունը:
54 Սա դարձեալ երկրորդ նշանն արաւ Յիսուսը,
երբոր Հրէաստանից եկաւ Գալիլեա:

## ԳԼ. Ե.

1 Սորանից յետոյ տօն էր Հրէաների. և Յիսուսը
2 վեր ելաւ Երուսաղէմ: Եւ Երուսաղէմում *Ոչ-
խարաց **դուռն** մօտ մի աւազան կայ, որ Եբրայեցե-
րէն Բեթհեզդա է կոչվում, որ հինգ սրահ ունի:
3 Նորանցում խիստ շատ հիւանդներ կային պառ-
կած. կոյրեր, կաղեր, չորացածներ, (որ ջրի շար-
4 ժուելուն էին սպասում: Որովհետեւ Տիրոջ հրեշ-
տակը ժամանակ ժամանակ վայր էր գալիս այն ա-
ւազանը և ջուրը շարժում. և ջրի շարժուելուց
յետոյ նորա մէջ առաջ մտնողը բժշկվում էր՝ ինչ
5 հիւանդութիւն էլ որ ունենար:) Եւ այնտեղ մի
մարդ կար, որ երեսուն և ութ տարի էր հիւան-
6 դութեան մէջ: Երբոր Յիսուսը նորան պառկած
տեսաւ, և գիտաց, թէ արդէն շատ ժամանակից
7 է, նորան ասաց. Կամենո՞ւմ ես առողջ լինել: Հի-

*Դուռն. Պրոպատիկէ

ւանդը պատասխանեց նորան. Տէր, մարդ չ՚ունիմ,
որ երբոր ջուրը շարժվում է՝ ինձ աւազանի մէջ
գցէ. և մինչև որ ես գալիս եմ, ուրիշն ինձանից
8 առաջ իջնում է մէջը: Յիսուսը նորան ասաց. Վեր
9 կաց, մահիճդ առ և ման եկ: Եւ մարդն իսկոյն
ողջացաւ, և վեր առաւ իր մահիճը և ման էր գա-
10 լիս. և օրը շաբաթ էր: Հրէաներն էլ ասացին բը-
ժշկուածին. Շաբաթ է. արժան չէ քեզ, որ մա-
11 հիճդ վեր առնես: Նա պատասխանեց նորանց.
Նա՝ որ ինձ բժշկեց, նա ասաց ինձ. Մահիճդ առ
12 և ման եկ: Արդ հարցրին նորան և ասացին. Ո՞վ է
այն մարդը, որ քեզ ասաց. Մահիճդ առ և ման
13 եկ: Բայց բժշկուածը չ՚գիտէր թէ ո՞վ է. որով-
հետև Յիսուսը այնտեղի ամբոխի պատճառովը
14 խոյս առաւ: Սորանից յետոյ Յիսուսը նորան գտաւ
տաճարումը՝ և նորան ասաց. Ահա առողջացար,
այլ եւս չ՚մեղանչես, որ էլ աւելի չար բան չ՚լինի
15 քեզ: Մարդը գնաց և Հրէաներին պատմեց, թէ
Յիսուսն է, որ նորան առողջացրել է:
16 Եւ նորա համար Հրէաները Յիսուսին հալածում
էին, և ուզում էին նորան սպանել, որ շաբաթ
17 օրն անում էր այն բանը: Եւ Յիսուսը պատաս-
խանեց նորանց. Իմ Հայրը մինչև հիմա գործում է,
18 և ես էլ գործում եմ: Նորա համար Հրէաներն
էլ աւելի ուզում էին սպանել նորան, որ ոչ թէ
միայն շաբաթ օրն էր քանդում, այլ Աստուծուն
էլ իրան Հայր էր ասում, իր անձն Աստուծուն
19 հաւասար անելով: Յիսուսը պատասխանեց և ասաց
նորանց. Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ ձեզ, թէ
Որդին իրանից կարող չէ ոչինչ անել, թէ որ չը
տեսնէ Հօրն անելիս, որովհետև ինչ որ նա անում
է, հէնց Որդին էլ այն բանը նորա նման է անում:
20 Որովհետև Հայրը սիրում է Որդուն, և ամեն բան



ցոյց է տալիս նորան, որ ինքն անում է, և սորան-
ցից էլ աւելի մեծ մեծ գործեր ցոյց կ՚տայ նորան,
21 որ դուք զարմանաք: Որովհետեւ ինչպէս որ Հայրը
մեռելներին յարուցանում է և կենդանի անում,
այնպէս էլ Որդին, որոնց որ կամենում է, կենդա-
22 նի է անում: Որովհետեւ Հայրը ոչ մէկին էլ չէ
դատում, այլ ամեն դատաստանը տուաւ Որդուն.
23 Որ ամենքը պատուեն Որդուն, ինչպէս որ պատ-
ւում են Հօրը. Որդուն չ՚պատուողը՝ Հօրն էլ չէ
24 պատւում, որ ուղարկեց նորան: Ճշմարիտ ճշմա-
րիտ ասում եմ ձեզ, թէ իմ խօսքը լսողը, և ինձ
ուղարկողին հաւատացողը յաւիտենական կեանք
ունի, և դատաստան չի մտնիլ, այլ մահիցը փոխ-
25 ուեցաւ դէպի կեանք: Ճշմարիտ ճշմարիտ ասում
եմ ձեզ, թէ ժամանակ կ՚գայ՝ և հիմայ է, որ մե-
ռելներն Աստուծոյ Որդու ձայնը կ՚լսեն, և լսողնե-
26 րը կ՚ապրին: Որովհետեւ ինչպէս որ Հայրն իր ան-
ձումը կեանք ունի, այնպէս էլ Որդուն տուաւ՝ որ
27 իր անձումն կեանք ունենայ: Եւ նորան իշխանու-
թիւն տուաւ, որ դատաստան էլ անէ. որովհետև
28 մարդի Որդի է: Սորա վերայ մի զարմանաք. որով-
հետև ժամանակ կ՚գայ, որ ամենքը, որ գերեզման-
29 ներումն են, նորա ձայնը կ՚լսեն: Եւ դուրս կ՚գան
նորանք որ բարի են գործել՝ դէպի կեանքի յարու-
թիւնը, և նորանք որ չար են արել՝ դէպի դա-
30 տաստանի յարութիւնը: Ես ինձանից չեմ կարող
ոչինչ անել. ինչպէս լսում եմ՝ այնպէս եմ դա-
տում, և իմ դատաստանն արդար է. որովհետև
իմ կամքը չեմ որոնում, այլ ինձ ուղարկող Հօր
31 կամքը: Եթէ ես ինձ համար վկայեմ, իմ վկայու-
32 թիւնը ճշմարիտ չէ: Ուրիշն է, որ ինձ համար վը-
կայում է. և ես գիտեմ որ ճշմարիտ է այն վկա-
33 յութիւնը, որ վկայում է ինձ համար: Դուք ու-

ղարկեցիք Յովհաննէսի մօտ. և նա վկայութիւն
34 տուաւ ճշմարտութեանը: Իսկ ես ոչ թէ մարդ-
կանցից եմ առնում վկայութիւնը. այլ սա ասում
35 եմ, որ դուք ապրէք: Նա այն ճրագն էր, որ վառ-
վում էր և լոյս էր տալիս. և դուք կամեցաք, մի
36 առ ժամանակ ուրախանալ նորա լոյսովը: Բայց ես
աւելի մեծ վկայութիւն ունիմ քան թէ Յովհան-
նէսը, այսինքն այն գործերն, որ Հայրն ինձ տուաւ,
որ կատարեմ նորանց. նոյն այն գործերն, որ գոր-
ծում եմ, ինձ համար վկայում են, թէ Հայրն
37 ուղարկեց ինձ: Եւ ինձ ուղարկող Հայրն ինքն ինձ
համար վկայեց. դուք ոչ նորա ձայնը լսեցիք եր-
38 բէք, և ոչ նորա կերպարանքը տեսաք. Եւ ոչ նո-
րա խօսքն ունիք բնակուած ձեզանում. որովհետև
այն որ նա ուղարկեց, դուք չէք հաւատում նո-
39 րան: Քննեցէք գրքերը, որ դուք կարծում էք թէ
նորանցով ունիք յաւիտենական կեանք, և նորանք
40 են որ ինձ համար վկայում են: Եւ դուք չէք կա-
41 մենում ինձ մօտ գալ, որ կեանք ունենաք: Ես
42 մարդկանցից փառք չեմ առնում: Բայց ճանա-
չում եմ ձեզ, որ Աստուծոյ սէրը չ'ունիք ձեր ան-
43 ձերումը: Ես իմ Հօր անունովն եկայ, և ինձ չէք
ընդունում. եթէ ուրիշը գայ իր անունովը, նորան
44 կ'ընդունիք: Ի՞նչպէս կարող էք դուք հաւատալ,
որ իրարից էք փառք առնում, և այն փառքը, որ
45 միայն Աստուածանից է, չէք որոնում: Մի կար-
ծէք, թէ ես Հօր մօտ ամբաստանութիւն կ'անեմ
ձեզանից. կայ որ ձեզանից ամբաստանութիւն է
անում՝ Մովսէսը, որի վերայ դուք ձեր յոյսը դը-
46 րել էք: Որովհետև եթէ դուք Մովսէսին հաւա-
տայիք, ինձ էլ կ'հաւատայիք, որովհետև նա ինձ
47 համար գրեց: Բայց եթէ նորա գրուածներին չէք
հաւատում, ինչպէս իմ խօսքերին կ'հաւատաք:



## Գլ. Զ.

1 Սորանից յետոյ Յիսուսը գնաց Գալիլեայի Տիբեր-
2 եա ծովի միւս կողմը: Եւ շատ ժողովուրդ գնում
էր նորա ետևից. որովհետև տեսնում էին նորա
3 նշանները, որ անում էր հիւանդների վերայ: Յի-
սուսն էլ վեր ելաւ սարը, և նստեց իր աշակերտ-
4 ների հետ այնտեղ: Եւ Հրէաների զատիկի տօնը
մօտ էր:
5 Յիսուսն էլ իր աչքերը բարձրացրեց և տեսաւ,
որ շատ ժողովուրդ էր գալիս իրան մօտ. ասաց Փի-
լիպպոսին. Ի՞նչ տեղից հաց առնենք, որ դորանք
6 ուտեն: Բայց այս ասաց՝ նորան փորձելով. որովհե-
7 տև ինքը գիտէր թէ ինչ պիտի անէր: Փիլիպպոսը
պատասխանեց նորան. Երկու հարիւր դահեկանի
հաց բաւական չէ դորանց, որ ամեն մէկը մի քիչ
8 առնէ: Նորա աշակերտներից մէկը, Անդրէասը՝ Սի-
9 մօն Պետրոսի եղբայրն՝ ասաց նորան. Այստեղ մէկ
տղայ կայ, որ հինգ գարիէ հաց ունի և երկու
փոքր ձուկ. բայց սա ինչ է այդչափ մարդկանց
10 համար: Յիսուսն էլ ասաց. Մարդկանցը նստեցրէք.
և շատ խոտ կար այն տեղը. և մարդիկը նստեցին
11 համարով իբր հինգ հազար: Եւ Յիսուսը հացերն
առաւ՝ գոհացաւ և բաժանեց աշակերտներին, և
աշակերտներն էլ նստողներին, նոյնպէս էլ ձկների-
12 ցը որչափ որ կամեցան: Եւ երբոր կշտացան, ասաց
իր աշակերտներին. Ժողովեցէք աւելացած կտոր-
13 ները՝ որ բան չ'կորչի: Եւ ժողովեցին, և կտորների-
ցը տասներկու կողով լցրին այն հինգ գարիէ հա-
14 ցիցը, որ ուտողներիցն աւելացաւ: Բայց մարդիկն՝
երբոր տեսան այն նշանն, որ արաւ Յիսուսը, ասում
էին, թէ Սա է ճշմարտապէս այն մարգարէն, որ պի-

15 տի աշխարհք գար։ Յիսուսն էլ իմանալով թէ
գալու են իրան յափշտակելու, որ թագաւոր շինեն
16 իրան, դարձեալ մինակ գնաց սարը։ Եւ երբոր ի-
րիկուն եղաւ, նորա աշակերտները իջան ծովի եզ-
17 րը. եւ նաւը մտնելով գնացին ծովի այն կողմը՝
Կափառնայում. և արդէն մթնել էր, և Յիսուսը
18 չէր եկել նորանց մօտ։ Եւ ծովն էլ սաստիկ քա-
19 մու փչելուցը յուզվում էր։ Եւ երբոր թիավարե-
լով քսանեւհինգ կամ երեսուն ասպարէզի չափ ա-
ռաջ էին գնացել, տեսան Յիսուսին ծովի վերայ
քայլելով գալիս, որ նաւին մօտենում էր, և վա-
20 խեցան։ Նա էլ ասաց նորանց. Ես եմ, մի վախե-
21 նաք։ Եւ կամենում էին նորան ընդունել նաւի
մէջ. և նաւը շուտով հասաւ այն երկիրը, որ
գնում էին։
22 Հետեւեալ օրն այն ժողովուրդը, որ ծովի այն
կողմին էր, տեսնելով որ ուրիշ նաւ չ'կար այն-
տեղ մէկիցը ջօկ, որ նորա աշակերտները նորա մէջ
մտան. և որ Յիսուսը իր աշակերտների հետ նաւը
չէր մտած, բայց միայն նորա աշակերտները գնա-
23 ցին։ (Բայց Տիբերիայիցը ուրիշ նաւեր եկան այն
տեղի մօտ, ուր հացը կերան Տիրոջ գոհանալովը։)
24 Արդ երբոր ժողովուրդը տեսաւ, որ Յիսուսն այն-
տեղ չէ, և ոչ էլ նորա աշակերտները, իրանք էլ
նաւերը մտան և եկան Կափառնայում, Յիսուսին
25 որոնելով։ Եւ երբոր նորան ծովի այն կողմին գը-
տան, նորան ասացին. Ռաբբի, ե՞րբ եկար այստեղ։
26 Յիսուսը պատասխանեց նորանց և ասաց. Ճշմարիտ
ճշմարիտ ասում եմ ձեզ, դուք ինձ որոնում էք՝
ոչ թէ նորա համար որ նշաններ տեսաք, բայց որ
27 հացից կերաք և կշտացաք։ Գործեցէք ոչ թէ
կորչելու կերակուրի համար, այլ այն կերակուրի,
որ մնացող է յաւիտենական կեանքի մէջ, որ



մարդի Որդին կ'տայ ձեզ. որովհետեւ Աստուած
28 Հայրը կնքեց նորան։ Արդ նորան ասացին. Ի՞նչ ա-
29 նենք, որ Աստուծոյ գործերը գործենք։ Յիսուսն
էլ պատասխանեց և նորանց ասաց. Սա է Աստու-
ծոյ գործը. որ հաւատաք նորան, որին նա ուղար-
30 կեց։ Եւ նորան ասացին. Ապա դու ի՞նչ նշան ես
անում, որ տեսնենք և հաւատանք. ի՞նչ ես գոր-
31 ծում։ Մեր հայրերը անապատումը մանանան կե-
րան. ինչպէս գրուած է թէ Երկնքից հաց տուաւ
32 նորանց ուտելու։ Յիսուսն էլ նորանց ասաց. Ճըշ-
մարիտ ճշմարիտ ասում եմ ձեզ. ոչ թէ Մովսէ-
սը տուաւ ձեզ այն հացը երկնքից, այլ իմ Հայրը
33 տալիս է ձեզ երկնքից ճշմարիտ հացը։ Որովհետեւ
Աստուծոյ հացը նա է, որ երկնքիցն է իջնում, և
34 որ աշխարհքին կեանք է տալիս։ Նորանք էլ ասա-
ցին. Տէր, ամեն ժամանակ տուր մեզ այդ հացը։
35 Յիսուսն էլ նորանց ասաց. Ես եմ կեանքի հացը.
ինձ մօտ եկողը չի սովիլ, և ինձ հաւատացողը եր-
36 բէք չի ծարաւիլ։ Բայց ես ասացի ձեզ, թէ տե-
37 սաք էլ ինձ, և չէք հաւատում։ Այն ամենը, որ
Հայրն ինձ տալիս է, ինձ մօտ կ'գայ. և ինձ մօտ
38 եկողին ես դուրս չեմ հանիլ։ Որովհետեւ ես իջայ
երկնքից, որ ոչ թէ իմ կամքն անեմ, այլ ինձ
39 ուղարկողի կամքը։ Սա է ինձ ուղարկող Հօր կամ-
քը, որ այն ամենը, որ նա ինձ տուաւ, նորանից չը
կորցնեմ. այլ յետին օրումը յարուցանեմ նորան։
40 Եւ սա է ինձ ուղարկողի կամքը, որ ամեն ով որ
տեսնէ Որդուն և հաւատայ նորան, յաւիտենա-
կան կեանք ունենայ. և ես յետին օրումը կ'յա-
րուցանեմ նորան։
41 Հրէաներն էլ տրտնջում էին նորանից, որ ասաց,
42 թէ Ես եմ երկնքից իջած հացը։ Եւ ասում էին.
Չէ՞ որ սա Յիսուսն է Յովսէփի որդին, որի հօրը և

մօրը ճանաչում ենք. ապա սա ինչպէս է ասում,
43 Ես երկնքից եմ իջել: Յիսուսն էլ պատասխանեց
44 և ասաց նորանց. Մի տրտնջաք իրար հետ: Ոչ ով
կարող չէ ինձ մօտ գալ, եթէ Հայրն, որ ինձ ու-
ղարկեց, չ'քաշէ նորան. և ես յետին օրումը կ'յա-
45 րուցանեմ նորան: Գրուած է մարգարէների մէջ,
**թէ եւ** ամենքն Աստուածանից սովորած կ'լինին.
արդ ամեն ով որ Հօրիցը լսում և սովորում է,
46 գալիս է ինձ մօտ: Իբր չէ թէ մէկը տեսել է Հօ-
րը. բայց միայն նա, որ Աստուածանից է. Նա տե-
47 սել է Հօրը: Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ ձեզ.
Ինձ հաւատացողը յաւիտենական կեանք ունի.
48 Ես եմ կեանքի հացը: (49) Ձեր հայրերը մանանան
50 կերան անապատումը, և մեռան. Սա է այն հացը,
որ երկնքից է իջնում, որ եթէ մէկը սորանից ու-
51 տէ, չի մեռնիլ: Ես եմ կենդանի հացն, որ երկըն-
52 քից է իջել: Եթէ մէկն այս հացից ուտէ, յա-
ւիտեան կ'ապրի. և այն հացն՝ որ ես կ'տամ՝ իմ
մարմինն է, որ ես նորան աշխարհքի կեանքի հա-
մար կ'տամ:
53 Հրէաներն էլ իրար հետ կռւում էին և ասում.
Սա ինչպէս կարող է **իր** մարմինը տալ մեզ ուտե-
54 լու համար: Յիսուսն էլ նորանց ասաց. Ճշմարիտ
ճշմարիտ ասում եմ ձեզ. եթէ մարդի Որդու
մարմինը չ'ուտէք և նորա արիւնը չ'խմէք, կեանք
55 չ'ունիք ձեր անձերումը: Իմ մարմինը ուտողը և
իմ արիւնը խմողը յաւիտենական կեանք ունի. և
56 ես յետին օրումը կ'յարուցանեմ նորան: Որովհե-
տև իմ մարմինը ճշմարիտ կերակուր է, և իմ ա-
57 րիւնը ճշմարիտ խմելիք է: Իմ մարմինն ուտողը և
իմ արիւնը խմողը մնում է ինձանում, և ես նո-
58 րանում: Ինչպէս ինձ ուղարկեց կենդանի Հայրը,
և ես կենդանի եմ Հօր համար. այնպէս էլ նա որ



59 ինձ ուտում է, կենդանի կ'լինի ինձ համար: Սա
է այն հացը, որ երկնքից է իջել. ոչ թէ ինչպէս
ձեր հայրերը մանանան կերան և մեռան. այս հացն
ուտողը յաւիտեան կ'ապրի:
60 Այս ասաց ժողովարանումը, երբոր Կափառնա-
յումի մէջ սովորեցնում էր:
61 Եւ նորա աշակերտներից շատերը որ լսեցին, ասա-
ցին. Խիստ է այդ բանը, ո՞վ կարող է լսել դորան:
62 Բայց երբոր Յիսուսը գիտաց իր անձումը, թէ իր ա-
շակերտները տրտնջում էին դորա համար, նորանց
63 ասաց. Դա գայթակղեցնո՞ւմ է ձեզ: Ապա **ի՞նչ էք**
**տեսնելու**, եթէ մարդի Որդին տեսնէք վեր գնալիս,
64 ուր որ առաջ էր: Հոգին է կենդանացնողը. մարմի-
նը ոչինչ օգուտ չէ տալիս. այն բանն, որ ես ձեզ
65 հետ խօսեցի, հոգի է և կեանք է: Բայց ձեզանից
կան ոմանք, որ չեն հաւատում, որովհետև Յիսուսը
սկզբիցը գիտէր, թէ ով են չ'հաւատացողները, և
66 ով է նա՝ որ պիտի մատնէր նորան: Եւ ասաց. Նորա
համար ասացի ձեզ, թէ ոչ ով կարող չէ ինձ մօտ
գալ, եթէ իմ Հօրիցը տրուած չ'լինի նորան:
67 Սորանից յետոյ նորա աշակերտներից շատերը
ետ գնացին, և այլևս ման չէին գալիս նորա հետ:
68 Յիսուսն էլ ասաց այն տասներկուսին. Միթէ
69 դուք էլ ուզում էք գնալ: Սիմոն Պետրոսն էլ
պատասխանեց նորան. Տէր, ո՞ւմ մօտ գնանք. յա-
70 ւիտենական կեանքի խօսքեր ունիս դու: Եւ մենք
հաւատացինք և ճանաչեցինք, թէ դու ես Քրիս-
71 տոսը՝ կենդանի Աստուծոյ Որդին: Յիսուսը պա-
տասխանեց նորանց. Չէ՞ որ ես ձեզ տասներկու-
72 սիդ ընտրեցի, և ձեզանից մէկը սատանայ է: Եւ
սա Իսկարիովտացի Սիմոնեան Յուդայի մասին էր
ասում. որ նա էր մատնելու նորան. և ինքը տաս-
ներկուսից մէկն էր:

## ԳԼ. Է.

1 Եւ սորանից յետոյ Յիսուսը ման էր գալիս Գա-
լիլեայի մէջ. որովհետեւ չէր կամենում Հրէաստա-
նումը ման գալ, որովհետեւ Հրէաները որոնում էին
սպանել նորան:
2 Եւ Հրէաների տաղաւարահարաց տօնը մօտիկ
3 էր: Եւ նորա եղբայրներն ասացին նորան. Այստե-
ղից դուրս եկ և գնա Հրէաստան, որ քո աշակերտ-
ներն էլ տեսնեն քո գործերը, որ գործում ես.
4 Որովհետեւ ոչ ով չ՚կայ, որ թագուն մի բան անէ,
և ուզէ ճանաչուած լինել. եթէ դու այդ բաները
գործում ես, քո անձը յայտնիր աշխարհքին:
5 Որովհետեւ իր եղբայրներն էլ չէին հաւատում նո-
6 րան: Յիսուսն էլ ասաց նորանց. Իմ ժամանակը
դեռ հասած չէ, բայց ձեր ժամանակը միշտ պատ-
7 րաստ է. Աշխարհքը կարող չէ ձեզ ատել. բայց
ինձ ատում է, որ ես նորա համար վկայում եմ,
8 թէ նորա գործերը չար են: Դուք գնացէք այն տօ-
նին, ես դեռ չեմ գնում այն տօնին, որովհետեւ
9 իմ ժամանակը դեռ լցացած չէ: Սա որ նորանց ա-
10 սաց, մնաց Գալիլեայումը: Երբոր նորա եղբայրները
գնացին, այն ժամանակ ինքն էլ գնաց այն տօնին,
ոչ թէ յայտնի, այլ իբր գաղտնաբար:
11 Եւ Հրէաները որոնում էին նորան այն տօնումը
12 և ասում. Ո՞րտեղ է նա: Եւ ժողովուրդների մէջ
շատ զրոյց կար նորա համար. ոմանք ասում էին.
թէ Բարի մարդ է. ուրիշներն էլ ասում էին. Ոչ,
13 այլ ժողովրդին մոլորեցնում է: Սակայն ոչ ով
համարձակ չէր խօսում նորա վերայ՝ Հրէաների
վախի համար:
14 Եւ երբոր տօնն արդէն կէս եղաւ, Յիսուսը վեր



15 ելաւ տաճարը և սովորեցնում էր: Եւ Հրէաները
զարմանում էին և ասում. Սա ի՞նչպէս գիտէ գիր-
16 քերը առանց սովորած լինելու: Յիսուսը պատաս-
խանեց նորանց և ասաց. Իմ վարդապետութիւնն
17 իմը չէ, այլ ինձ ուղարկողինն է: Եթէ մէկը կա-
մենում է նորա կամքն անել, նա կ՚իմանայ այս
վարդապետութեան համար, թէ արդեօք Աստուա-
ծանի՞ց է, կամ եթէ ես իմ անձիցն եմ խօսում:
18 Իր անձից խօսողը, իր անձի փառքն է որոնում.
բայց նա որ իրան ուղարկողի փառքն է որոնում,
նա ճշմարիտ է և անիրաւութիւն չ՚կայ նորանում:
19 Չէ՞ որ Մովսէսը տուաւ ձեզ օրէնքը, և ձեզանից
20 ոչ ով չէ կատարում օրէնքը: Ի՞նչու էք ուզում
ինձ սպանել. Ժողովուրդը պատասխանեց և ասաց.
21 Դև ունիս. ո՞վ է ուզում քեզ սպանել: Յիսուսը
պատասխանեց և ասաց նորանց. Մի գործ գործե-
22 ցի, և ամենքդ զարմացել էք: Նորա համար Մով-
սէսը ձեզ տուաւ թլփատութիւնը, (ոչ թէ Մով-
սէսից է, այլ հայրերից.) և շաբաթ օրը մարդ
23 էք թլփատում: Եթէ մարդ շաբաթ օրումը թլ-
փատութիւն է ընդունում, որ Մովսէսի օրէնքը չը
քանդուի, ինձ բարկանում էք, որ ես ամբողջ
24 մարդ բժշկեցի շաբաթ օրը: Աչքի երեւութով մի
դատէք, այլ ուղիղ դատաստան արէք:
25 Արդ Երուսաղէմացիներից ոմանք ասում էին.
26 Չէ՞ որ սա նա է, որին ուզում են սպանել: Եւ
ահա համարձակ խօսում է, և ոչինչ չեն ասում
դորան. մի գուցէ իրաւ իշխաններն էլ իմացան, որ
27 սա է ճշմարտապէս Քրիստոսը: Բայց սորան գի-
տենք, թէ որտեղից է. իսկ Քրիստոսն երբոր գայ,
28 ոչ ոք չի գիտենալ թէ որտեղից է: Յիսուսն էլ՝
սովորեցնելիս աղաղակեց տաճարումն ասելով. Ինձ
էլ գիտէք և գիտէք էլ թէ ինչ տեղից եմ. և ես

իմ անձիցը չեմ եկել. այլ ճշմարիտ է ինձ ու-
29 ղարկողը, որին դուք չ՚գիտէք։ Իսկ ես գիտեմ նո-
րան, որովհետեւ նորանից եմ, և նա ուղարկեց ինձ։
30 Եւ ուզում էին բռնել նորան. բայց ոչ ով ձեռք
չ՚ձգեց նորա վերայ. որովհետեւ նորա ժամը դեռ
31 չէր հասել։ Եւ ժողովրդից շատերը հաւատացին
նորան և ասում էին, թէ երբոր Քրիստոսը գայ,
արդեօ՞ք սորանից աւելի նշաններ կ՚անէ, քան որ
սա արաւ։
32 Եւ Փարիսեցիները լսեցին ժողովրդին, որ այդ
բաները տրտնջում էին նորա համար. և Փարիսե-
ցիները և քահանայապետներն սպասաւորներ ու-
33 ղարկեցին, որ բռնեն նորան։ Յիսուսն էլ ասաց նո-
րանց. Դեռ մի քիչ ժամանակ ձեզ հետ եմ, և
34 գնում եմ ինձ ուղարկողի մօտ։ Ինձ կ՚որոնէք և
չէք գտնիլ, և որտեղ որ ես եմ, դուք չէք կարող
35 գալ։ Հրէաներն էլ իրար ասացին. Դա ո՞րտեղ է
գնալու, որ մենք չ՚գտնենք նորան. արդեօ՞ք Հել-
լենացիների ցրուած ժողովրդների մօտն է գնա-
36 լու և Հելլենացիներին է սովորեցնելու։ Ի՞նչ է այն
խօսքն, որ ասաց, թէ Ինձ կ՚որոնէք և չէք գտնիլ, և
որտեղ որ ես եմ, դուք չէք կարող գալ։
37 Եւ տօնի վերջին մեծ օրումը Յիսուսը կանգնած
էր, աղաղակեց և ասաց. Եթէ մէկը ծարաւ է,
38 թող ինձ մօտ գայ, և խմէ. Ինձ հաւատացողը,
ինչպէս գիրքն ասում է, նորա փորից կենդանի
39 ջրերի գետեր կ՚բղխին։ Սա ասաց այն Հոգու հա-
մար, որ ընդունելու էին նորան հաւատացողները,
որովհետեւ դեռ Սուրբ Հոգին տրուած չէր, որով-
40 հետեւ Յիսուսը դեռ չէր փառաւորուած։ Արդ ժո-
ղովրդից շատերը, երբոր այս խօսքը լսեցին, ասում
41 էին. Սա ճշմարտապէս այն մարգարէն է։ Ուրիշ-
ներն ասում էին. Սա Քրիստոսն է. և էլ ուրիշ-



ներն ասում էին. Միթէ Քրիստոսը Գալիլեայից
42 կ՚գայ։ Չէ՞ որ գիրքն ասում է, Քրիստոսը Դաւի-
թի սերունդից և Բեթլեհէմ գիւղից կ՚գայ, որ-
43 տեղ Դաւիթն էր։ Եւ տարաձայնութիւն եղաւ
44 ժողովրդի մէջ նորա համար։ Եւ նորանցից ոմանք
կամեցան բռնել նորան. բայց ոչ ոք ձեռք չ՚ձգեց
նորա վերայ։
45 Եւ սպասաւորները եկան քահանայապետների և
Փարիսեցիների մօտ. և սորանք ասացին նորանց.
46 Ի՞նչու համար նորան չ՚բերիք։ Սպասաւորները պա-
տասխանեցին. Երբէք մի մարդ այսպէս չ՚խօսեց
47 ինչպէս այս մարդը։ Փարիսեցիներն էլ պատասխա-
նեցին և ասացին. Միթէ դուք էլ մոլորուեցիք։
48 Միթէ իշխաններից կամ Փարիսեցիներից մէկը
49 հաւատա՞ց նորան։ Այլ այդ ռամիկ ժողովուրդը,
50 որ օրէնքը չ՚գիտէ, անիծուած են։ Նիկոդեմոսը,
որ գիշերը նորա մօտ էր եկել, նորանցից մէկը լի-
51 նելով, ասաց նորանց. Միթէ մեր օրէնքը մի մարդի
դատում է, եթէ առաջ չ՚լսէ նորանից և չ՚գի-
52 տենայ, թէ ինչ է գործում։ Պատասխանեցին
և ասացին նորան. Միթէ դու էլ ես Գալիլեայից.
քննիր և տես, որ Գալիլեայից մարգարէ դուրս չէ
53 եկել։ Եւ ամեն մէկը գնաց իր տունը։

## ԳԼ. Ը.

1 Եւ Յիսուսը գնաց Ձիթենեաց սարը։ (2) Եւ ա-
ռաւօտանց դարձեալ եկաւ տաճարը, և բոլոր
ժողովուրդը նորա մօտ էր գալիս. և նա նստած
3 սովորեցնում էր նորանց։ Դպիրները և Փարիսեցի-
ները մի կին բերին նորա մօտ՝ շնութեան մէջ բռ-
4 նուած, և նորան մէջտեղը կանգնեցնելով, նորան
ասացին. Վարդապետ, այս կինը բռնուել է յայտ-

5 նապէս չնանալիս: Եւ օրէնքումը Մովսէսը պատ-
ուիրեց մեզ, որ այսպիսիները քարկոծուին. հիմա
6 դու ի՞նչ ես ասում: Բայց այս բանն ասում էին՝
նորան փորձելով, որ չարախօսեն նորանից: Յիսուսն
էլ դէպի ցած ծռուելով մատովը գրում էր հողի
7 վերայ: Բայց երբոր ստիպում էին հարցնելով նո-
րան, վեր նայեց՝ և ասաց. Ձեզանից ով որ անմեղ
8 է, թող առաջ նա քար գցէ դորա վերայ: Եւ
դարձեալ դէպի ցած ծռուելով՝ գրում էր հողի
9 վերայ: Նորանք էլ երբոր սա լսեցին և իրանց
խղճմտանքից յանդիմանուեցան՝ մէկը մէկի ետե-
ւից դուրս էին գնում, ծերերից սկսած մինչև
յետինները. և Յիսուսը միայն մնաց, և կինը կանգ-
10 նած մէջտեղը: Յիսուսն էլ վեր նայեց, ոչ ոքին չը
տեսաւ այն կնկանից ջոկ, և ասաց նորան. Ով կին,
ո՞ւր են (քեզ ամբաստանողները). ոչ ով քեզ չը
11 դատապարտե՞ց: Նա էլ ասաց. Ոչ ով, Տէր. և
Յիսուսն էլ ասաց նորան. Ես էլ չեմ քեզ դատա-
պարտում. գնա, և այսուհետեւ մեղք մի գործիր:
12 Արդ Յիսուսը դարձեալ խօսեց նորանց հետ և
ասաց. Ես եմ աշխարհքի լոյսը. ով որ իմ ետեւից
գայ, նա խաւարումը չի գնալ, այլ կեանքի լոյսը
13 կ'ընդունի: Փարիսեցիներն էլ ասացին նորան. Դու
ես քո անձի համար վկայում. քո վկայութիւնը
14 ճշմարիտ չէ: Յիսուսը պատասխանեց և ասաց նո-
րանց. Թէև ես վկայեմ իմ անձի համար, իմ վը-
կայութիւնը ճշմարիտ է. որովհետեւ գիտեմ թէ
որտեղից եկայ և որտեղ եմ գնում. բայց դուք
չ'գիտէք, թէ որտեղից եմ գալիս, և որտեղ եմ
15 գնում: Դուք մարմնի համեմատ էք դատում. ես
16 չեմ դատում ոչ մէկին էլ: Եւ եթէ ես դատեմ
էլ, իմ դատաստանը ճշմարիտ է. որովհետեւ ես
17 միայն չեմ, այլ ես և ինձ ուղարկող Հայրը: Եւ



ձեր օրէնքումն էլ գրուած է, թէ երկու մարդ-
18 կանց վկայութիւնը ճշմարիտ է: Ես եմ, որ ինձ
համար վկայում եմ, և վկայում է ինձ համար
19 ինձ ուղարկող Հայրը: Եւ ասում էին նորան, Ո՞ւր
է քո Հայրը. Յիսուսը պատասխանեց. Ոչ ինձ գի-
տէք, և ոչ իմ Հօրը. եթէ ինձ գիտենայիք, իմ
Հօրն էլ կ'գիտենայիք:
20 Այս բանը Յիսուսը գանձատան մէջ խօսեց նորանց
հետ տաճարումը սովորեցնելիս. և ոչ ով չ'բըռ-
նեց նորան. որովհետև դեռ նորա ժամը չէր հասել:
21 Յիսուսը դարձեալ ասաց նորանց. Ես գնում եմ.
և ինձ կ'որոնէք. և ձեր մեղքի մէջ կ'մեռնիք.
որտեղ որ ես եմ գնում, դուք չ'էք կարող գալ:
22 Հրէաներն էլ ասում էին. Միթէ ինքն իրան կը
սպանէ, որ ասում է, թէ Որտեղ որ ես եմ գնում,
23 դուք չէք կարող գալ: Եւ ասաց նորանց. Դուք
ներքևից էք, ես վերևից եմ. դուք այս աշխարհ-
24 քիցն էք. ես այս աշխարհքիցը չեմ: Արդ ես ասա-
ցի ձեզ, թէ Ձեր մեղքի մէջ կ'մեռնիք. որովհե-
տեւ եթէ չ'հաւատաք թէ ես եմ, ձեր մեղքի մէջ
25 կ'մեռնիք: Եւ նորանք ասացին նորան. Դու ո՞վ ես.
և Յիսուսն ասաց նորանց. * Այն, որ սկզբից ձեզ
26 հետ խօսում եմ: Շատ բան ունիմ ձեզ համար
խօսելու և դատելու. բայց ինձ ուղարկողը ճշմա-
րիտ է. և ես ինչ որ նորանից լսեցի, այն եմ խօ-
27 սում աշխարհքի մէջ: Չ'իմացան, թէ Հօր համար
էր ասում նորանց:
28 Յիսուսն էլ ասաց նորանց. Երբոր մարդի Որդին
կ'բարձրացնէք, այն ժամանակ կ'իմանաք, թէ ես
եմ. և իմ անձիցը ոչինչ չեմ անում. այլ ինչպէս
29 իմ Հայրը սովորեցրեց ինձ, այն եմ խօսում: Եւ

*Կամ՝ Առաջ այն, որ խօսում էլ եմ ձեզ հետ:

ինձ ուղարկողն ինձ հետ է. ինձ մինակ չէ թողել
Հայրը, որովհետեւ ես միշտ Նորան հաճելի բաներն
եմ անում
30 Երբոր Նա այս բաները խօսում էր, շատերը հա-
31 ւատացին Նորան. Եւ Յիսուսն իրան հաւատացած
Հրէաներին ասաց. Եթէ դուք իմ խօսքի մէջ կե-
32 նաք, ճշմարտապէս իմ աշակերտներն էք: Եւ ճըշ-
մարտութիւնը կ'ճանաչէք. և ճշմարտութիւնը
33 կ'ազատէ ձեզ: Պատասխանեցին Նորան. Մենք Աբ-
րահամի զաւակ ենք, և ոչ ոքի երբէք չենք ծա-
ռայել, դու ինչպէս ես ասում, թէ ազատ կ'լի-
34 նիք: Յիսուսը պատասխանեց նորանց. Ճշմարիտ
ճշմարիտ ասում եմ ձեզ, թէ ամեն ով որ մեղք
35 է գործում, մեղքի ծառայ է: Ծառան էլ յաւի-
տեան չէ կենում տան մէջ. որդին կենում է յա-
36 ւիտեան: Ուրեմն եթէ Որդին ազատէ ձեզ, իրա-
37 ւի ազատ կ'լինիք: Գիտեմ որ Աբրահամի զաւակ
էք. բայց ուզում էք ինձ սպանել. որովհետև իմ
38 խօսքը տեղ չ'ունի ձեզանում: Ես ինչ որ տեսայ
իմ Հօր մօտ, խօսում եմ. և դուք՝ ինչ որ ձեր
39 հօրից տեսաք, անում էք: Պատասխանեցին և ա-
սացին Նորան. Մեր հայրը Աբրահամն է. Յիսուսը
Նորանց ասաց. Եթէ Աբրահամի որդիք լինէիք, Աբ-
40 րահամի գործերը կ'գործէիք: Բայց հիմա ուզում
էք ինձ սպանել, մի մարդի, որ ճշմարտութիւնն
եմ խօսել ձեզ, որ Աստուծանից լսեցի. այդ
41 բանն Աբրահամը չ'արաւ: Դուք ձեր հօր գործերն
էք անում. և ասացին Նորան. Մենք պոռնկութիւ-
նից չենք ծնուած. մէկ Հայր ունինք, այսինքն Աս-
42 տուած. Յիսուսն էլ նորանց ասաց. Եթէ ձեր հայրն
Աստուած լինէր, ինձ կ'սիրէիք. որովհետեւ ես Աս-
տուծանից դուրս եկայ և եկայ. որովհետեւ ոչ
թէ իմ անձիցն եկայ, այլ Նա ուղարկեց ինձ:



43 Ի՞նչու համար իմ խօսքը չէք իմանում. Նորա հա-
44 մար, որ դուք չէք կարող իմ խօսքը լսել: Դուք
ձեր սատանայ հօրից էք, և կամենում էք ձեր հօր
ցանկութիւններն անել. Նա սկզբից մարդասպան
էր, և ճշմարտութեան մէջ չ'կեցաւ. որովհետեւ
ճշմարտութիւն չ'կայ նորանում. Երբոր սուտն է
խօսում, իրաններիցն է խօսում. որովհետեւ սուտ-
45 խօս է և *սուտութեան հայրը: Բայց ես որովհետեւ
ճշմարտութիւն եմ խօսում, ինձ չէք հաւատում:
46 Ձեզանից ո՞վ կարող է ինձ մեղքի համար յան-
դիմանել. բայց եթէ ճշմարտութիւնն եմ ասում
47 ինչու չէք հաւատում ինձ: Աստուածանից լինողը
Աստուծոյ խօսքերը լսում է. Նորա համար դուք
48 չէք ականջ դնում, որ Աստուածանից չէք: Հրէա-
ները պատասխանեցին և ասացին Նորան. Չէ որ
մենք լաւ ենք ասում, թէ դու Սամարացի ես, և
49 դեւ ունիս: Յիսուսը պատասխանեց. Ես դեւ չ'ու-
նիմ, այլ իմ Հօրը պատւում եմ, և դուք ան-
50 պատւում էք ինձ: Եւ ես իմ փառքը չեմ որո-
51 նում. կայ որոնողը և դատողը: Ճշմարիտ ճշմա-
րիտ ասում եմ ձեզ. Եթէ մէկն իմ խօսքերը պահէ,
52 Նա մահ չի տեսնիլ յաւիտեան: Հրէաներն էլ ա-
սացին Նորան. Հիմա իմացանք, որ դեւ ունիս. Աբ-
րահամը մեռաւ և մարգարէներն էլ. և դու ա-
սում ես. Եթէ մէկն իմ խօսքը պահէ, մահ չի ճա-
53 շակիլ յաւիտեան: Միթէ դու աւելի մեծ ես
քան մեր հայր Աբրահամը, որ մեռաւ և մարգա-
54 րէներն էլ մեռան. դու քեզ ո՞վ ես անում: Յի-
սուսը պատասխանեց. Եթէ ես իմ անձը փառաւո-
րեմ, իմ փառքը ոչինչ է: Հայրն է ինձ փառաւո-
րողը, որի համար դուք ասում էք, թէ ձեր Աս-

*Յուն. նորա

55 տուածն է. Եւ դուք չէք ճանաչում նորան. բայց
ես գիտեմ նորան. և եթէ ասեմ, թէ ես չ'գիտեմ
նորան, ձեզ նման ստախօս կ'լինեմ. բայց ես գի-
56 տեմ նորան, և նորա խօսքը պահում եմ։ Աբրա-
համ՝ ձեր հայրը *ցանկացաւ, որ իմ օրը տեսնէ, և
57 տեսաւ, և ուրախացաւ էր։ Հրէաները նորան ա-
սացին. Դու դեռ յիսուն տարեկան չես, և Աբրա-
58 համին տեսար։ Յիսուսը նորանց ասաց. Ճշմարիտ
ճշմարիտ ասում եմ ձեզ. Աբրահամի լինելուց ա-
59 ռաջ եմ ես։ Եւ նորանք քարեր վեր առան, որ
նորա վերայ գցեն. բայց Յիսուսը ծածկուեցաւ, և
դուրս ելաւ գնաց տաճարից (նորանց միջովն անց-
նելով. և այսպէս գնաց)։

ԳԼ. Թ.

1 Եւ անցնելիս մի մարդ տեսաւ ծնունդից կոյր։
2 Եւ նորա աշակերտները հարցրին նորան և ասացին.
Ռաբբի, ո՞վ է մեղանչել, սա՞. թէ իրան ծնողքը.
3 որ կոյր է ծնուել։ Յիսուսը պատասխանեց. Ոչ դա
է մեղանչել, և ոչ էլ իրան ծնողքը. այլ որ Աս-
4 տուծոյ գործերը յայտնի լինին դորանում։ Ինձ
պէտք է նորա գործերը գործել, որ ինձ ուղարկեց,
քանի որ օր կայ. գիշերը գալիս է, որ այն ժամա-
5 նակ ոչ ով կարող չէ գործել. Քանի որ աշխարհ-
6 քումն եմ, լոյս եմ աշխարհքի։ Այս ասելով թքեց
գետինը, և թուքից ցեխ շինեց, և ցեխը քսեց
7 կոյրի աչքերի վերայ, Եւ նորան ասաց. Գնա լուա-
ցուիր Սիլովամի աւազանումը, (որ թարգմանվում
է՝ Ուղարկուած.) և նա գնաց լուացուեցաւ, եկաւ
8 և տեսնում էր։ Բայց դրացիները և նորանք որ ա-

*Յուն. ցնծաց



ռաջուց տեսել էին նորան, որ կոյր էր, ասում
9 էին. Չէ՞ որ սա է այն նստող մուրացողը. Ուրիշ-
ներն ասում էին, թէ նա է. ուրիշներն էլ, թէ
նորան նման է. բայց ինքն ասում էր թէ ես եմ։
10 Եւ նորան ասում էին. Ապա աչքերդ ի՞նչպէս բաց-
11 ուեցան։ Նա պատասխանեց և ասաց. Մի մարդ՝ ա-
նունը Յիսուս, ցեխ շինեց և աչքերիս քսեց, և ինձ
ասաց. Գնա Սիլովամի աւազանը, և լուացուիր.
12 գնացի և լուացուեցայ, և տեսնում եմ։ Եւ նորան
ասացին. Ո՞ւր է նա. ասաց. Չ'գիտեմ։
13 Փարիսեցիների մօտ տարան նորան, որ մի ժամա-
14 նակ կոյր էր։ Եւ շաբաթ օր էր, երբոր Յիսուսը
15 ցեխ շինեց և նորա աչքերը բացաւ։ Փարիսեցինե-
րը դարձեալ հարցնում էին նորան, թէ ի՞նչպէս
տեսաւ. և նա նորանց ասաց. Ցեխ դրաւ իմ աչքե-
16 րի վերայ, և լուացուեցայ, և տեսնում եմ։ Եւ
Փարիսեցիներից ոմանք ասացին. Այն մարդը Աս-
տուածանից չէ, որ շաբաթը չէ պահում. ուրիշ-
ներն ասում էին. Ի՞նչպէս կարող է մի մեղաւոր
մարդ այսպիսի նշաններ անել. և բաժանմունք կար
17 նորանց մէջ։ Դարձեալ ասացին կոյրին. Դու ի՞նչ
ես ասում նորա համար, որ աչքերդ բացաւ. և
18 նա ասաց, թէ Մարգարէ է։ Եւ Հրէաները չէին
հաւատում նորա համար, թէ կոյր էր և բացուե-
ցաւ. մինչև որ աչքերը բացուածի ծնողներին կանչե-
19 ցին. Նորանց հարցրին և ասացին. Սա՞ է ձեր որ-
դին, որի համար ասում էք դուք, թէ Կոյր ծըն-
20 ուեցաւ. ապա ի՞նչպէս է հիմա տեսնում։ Նորա
ծնողները պատասխանեցին և ասացին. Գիտենք, որ
21 սա է մեր որդին, և թէ կոյր ծնուեցաւ. Բայց թէ
հիմա ի՞նչպէս է տեսնում, չ'գիտենք, կամ ո՞վ
բացաւ նորա աչքերը, մենք չ'գիտենք. ինքը չա-
փահաս է. իրան հարցրէք. թող ինքը խօսի իրան

22 համար։ Նորա ծնողներն այս ասացին, որովհետեւ
Հրէաներիցը վախենում էին. որովհետեւ Հրէաները
արդէն միաբան որոշել էին, որ եթէ մէկը Քրիս-
տոս դաւանէ Նորան, ժողովարանիցը դուրս լինի։
23 Նորա համար նորա ծնողներն ասացին, թէ Ինքը
24 չափահաս է, իրանից հարցրէք։ Յետոյ երկրորդ
անգամ կանչեցին այն մարդին, որ կոյր էր, և նո-
րան ասացին. Աստուծուն փառք տուր, մենք գի-
25 տենք, որ այն մարդը մեղաւոր է։ Նա էլ պա-
տասխանեց և ասաց. Թէ մեղաւոր է, ես չ՚գիտեմ.
մի բան գիտեմ, որ կոյր էի և հիմա տեսնում եմ։
26 Եւ դարձեալ ասացին նորան. Ի՞նչ արաւ քեզ.
27 ի՞նչպէս բացաւ աչքերդ. Նորանց պատասխանեց.
Արդէն ձեզ ասացի և չ՚լսեցիք. ի՞նչու էք դարձեալ
կամենում լսել. մի՞թէ դուք էլ էք կամենում նո-
28 րան աշակերտ լինել։ Նորա՛նք նախատեցին նորան
և ասացին. Դու ես Նորա աշակերտը. իսկ մենք Մով-
29 սէսի աշակերտներն ենք։ Մենք գիտենք, որ Աստուած
Մովսէսի հետ խօսեց. բայց սորան չ՚գիտենք թէ
30 որտեղից է։ Մարդը պատասխանեց և նորանց ա-
սաց. Հէնց դա է զարմանալին, որ դուք չ՚գիտէք
31 թէ որտեղից է, և նա իմ աչքերը բացաւ։ Եւ
գիտենք, որ Աստուած մեղաւորներին չէ լսում.
այլ եթէ մէկը աստուածապաշտ է՝ և Նորա կամքը
32 կատարում է, նորան լսում է։ Աշխարհքի սկըզ-
բից հետէ չէ լսուած որ մէկը կոյր ծնուածի աչ-
33 քերը բացած լինի։ Եթէ դա Աստուածանից չէր,
34 ոչինչ չէր կարող անել։ Պատասխանեցին և նորան՝
ասացին. Դու բոլորովին մեղքի մէջ ես ծնուել, և
դո՞ւ ես մեզ սովորեցնում. և դուրս արին նորան։
35 Յիսուսը լսեց, որ նորան դուրս արին. և նորան
գտաւ և ասաց նորան. Դու հաւատո՞ւմ ես Աս-
36 տուծոյ Որդուն։ Նա պատասխանեց եւ ասաց. Տէր,



37 ո՞վ է Նա, որ հաւատամ Նորան։ Յիսուսն էլ նո-
րան ասաց. Տեսար էլ Նորան. և քեզ հետ խօսողն
38 էլ Նա ինքն է։ Եւ նա ասաց. Հաւատում եմ, Տէր,
39 և երկրպագեց Նորան։ Եւ Յիսուսն ասաց. Ես դա-
տաստանի համար եկայ այս աշխարհքը, որ չ՚տես-
նողները տեսնեն, և տեսնողները կուրանան։
40 Եւ Փարիսեցիներից ոմանք, որ Նորա հետ էին,
լսեցին այս, և ասացին Նորան. Մի՞թէ մենք էլ
41 կոյր ենք։ Յիսուսը նորանց ասաց. Եթէ կոյր լի-
նէիք, մեղք չէիք ունենալ. բայց հիմա ասում էք,
թէ Տեսնում ենք, նորա համար ձեր մեղքերը
մնում են։

## ԳԼ. Ժ.

1 Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ ձեզ. Ով որ դռնովը
չէ մտնում ոչխարների գաւիթը, այլ ուրիշ կող-
2 մից է վեր ելնում, նա գող է և աւազակ։ Բայց
3 դռնովը մտնողը ոչխարների հովիւն է։ Դռնապանը
նորա համար բաց է անում. և ոչխարները նորա
ձայնը լսում են, և նա իր ոչխարներն իրանց անու-
4 նովը կանչում է, և նորանց դուրս է հանում։ Եւ
երբոր իր ոչխարները դուրս է հանում, նորանց ա-
ռաջից գնում է, և ոչխարները գնում են նորա ե-
5 տեւից. որովհետեւ նորա ձայնը ճանաչում են։ Բայց
օտարի ետեւից չեն գնում. այլ նորանից փախչում
են, որովհետեւ օտարների ձայնը չեն ճանաչում։
6 Այս առակը Յիսուսը ասաց նորանց. բայց նո-
րա՛նք չ՚գիտէին, թէ ինչ էր այն, որ խօսում էր նո-
7 րանց հետ։ Յիսուսը դարձեալ նորանց ասաց. Ճըշ-
մարիտ ճշմարիտ ասում եմ ձեզ, թէ Ես եմ ոչ-
8 խարների դուռը։ Ամենքը՝ որ ինձանից առաջ ե-
կան, գողեր են և աւազակներ. և ոչխարներն էլ

9 նորանց չ'լսեցին։ Ես եմ դուռը. եթէ մէկն ինձա-
նով ներս մտնէ, կ'ապրի և կ'մտնէ և դուրս կը
10 գայ, և արօտ կ'գտնէ։ Գողը չէ գալիս, բայց միայն
որ գողանայ և սպանէ և կորուսանէ. Ես եկայ որ կեանք
11 ունենան և էլ աւելի ունենան։ Ես եմ բարի հո-
վիւը. բարի հովիւն իր անձը դնում է ոչխարների
12 համար։ Բայց վարձկանը, որ հովիւ չէ, որ ոչխար-
ներն իրանը չեն, տեսնում է գայլին գալիս, և թո-
ղում է ոչխարները և փախչում. և գայլը յափշ-
13 տակում է նորանց և ցրւում է ոչխարներին։ Եւ
վարձկանը փախչում է. որովհետև վարձկան է, և
14 ոչխարների համար հոգս չ'ունի։ Ես եմ բարի Հո-
վիւը, և ես իմիներին ճանաչում եմ, և իմիննե-
15 րիցն էլ ճանաչվում եմ։ Ինչպէս Հայրն է ինձ ճա-
նաչում, ես էլ ճանաչում եմ Հօրը, և իմ անձը
16 դնում եմ ոչխարների համար։ Եւ ուրիշ ոչխարներ
էլ ունիմ. որ այս գաւիթիցը չեն, և նորանց էլ
պէտք է բերեմ. և իմ ձայնին կ'լսեն, և մի հօտ **և**
17 մի հովիւ կ'լինին։ Նորա համար իմ Հայրը սիրում
է ինձ, որ իմ անձը դնում եմ, որպէսզի դարձեալ
18 առնեմ նորան։ Ոչ ով նորան վեր չէ առնում ին-
ձանից. այլ ես ինքս եմ ինձանից դնում նորան.
ես իշխանութիւն ունիմ նորան դնելու և իշխա-
նութիւն ունիմ նորան դարձեալ առնելու. այս
19 պատուէրն առայ իմ Հօրիցը։ Արդ դարձեալ բա-
ժանմունք եղաւ Հրէաների մէջ այս խօսքերի հա-
20 մար։ Եւ նորանցից շատերն ասում էին, թէ Դև ու-
նի, և գժվում է. ինչու էք ականջ դնում դորան։
21 Ուրիշներն ասում էին. Այս խօսքերը դիւահարի
**խօսքեր** չեն. միթէ դևը կարող է կոյրի աչքերը
բանալ։
22 Այն ժամանակ Երուսաղէմումը Նաւակատիք տօն
23 եղաւ, և ձմեռն էր։ Եւ Յիսուսը ման էր գալիս



24 տաճարումը Սողոմոնի սրահի մէջ։ Հրէաներն էլ
նորան շրջապատեցին և ասացին նորան. Մինչև երբ
ես պահում մեր հոգիները տարակուսանքի մէջ.
եթէ դու ես Քրիստոսը, համարձակ ասիր մեզ։
25 Յիսուսը պատասխանեց նորանց. Ասացի ձեզ, և չէք
հաւատում. այն գործերը, որ իմ Հօր անունովը
26 գործում եմ, նորանք վկայում են ինձ համար։ Բայց
դուք չէք հաւատում. որովհետև իմ ոչխարներիցը
27 չէք, ինչպէս որ ասացի ձեզ։ Իմ ոչխարներն իմ ձայ-
նը լսում են, և ես ճանաչում եմ նորանց, և իմ
28 ետևից գալիս են։ Եւ ես յաւիտենական կեանք
եմ տալիս նորանց, և նորանք յաւիտեան չեն կոր-
չիլ, և ոչ ով չի յափշտակիլ նորանց իմ ձեռքիցը։
29 Իմ Հայրը, որ **նորանց** տուաւ ինձ, ամենից մեծ է,
և ոչ ով կարող չէ իմ Հօր ձեռքիցը յափշտակել
30 **նորանց**։ Ես և Հայրը մի ենք։
31 Հրէաները դարձեալ քարեր վեր առան, որ նո-
32 րան քարկոծեն։ Յիսուսը նորանց պատասխանեց.
Շատ բարի գործեր ցոյց տուի ձեզ իմ Հօրիցը. նո-
րանցից ո՞ր գործի համար էք ինձ քարկոծում։
33 Հրէաները պատասխանեցին և ասացին. Բարի գոր-
ծի համար քեզ չենք քարկոծում, այլ հայհոյու-
թեան համար. և որ դու մարդ լինելով՝ քո անձն
34 Աստուած ես անում։ Յիսուսը նորանց պատասխա-
նեց. Գրուած չէ՞ ձեր օրէնքումը, թէ Ես ասացի՝
35 Աստուածներ էք։ Եթէ նորանց Աստուածներ է
ասում, որ Աստուծոյ խօսքն եղաւ նորանց, (և կա-
36 րելի չէ որ գիրքը եղծանուի,) **Ապա** նորան որ Հայ-
րը սրբեց և ուղարկեց աշխարհք, դուք ասում
էք, թէ հայհոյում ես, որ ասացի, թէ Աստուծոյ
37 Որդի եմ։ Եթէ իմ Հօր գործերը չեմ գործում, մի
38 հաւատաք ինձ։ Ապա եթէ գործում եմ, թէև
ինձ էլ չ'հաւատաք, **գոնէ** գործերին հաւատացէք։

որ ճանաչէք և հաւատաք, թէ Հայրն ինձանում
է և ես Նորա մէջ։
39 Դարձեալ ուզում էին Նորան բռնել, բայց Նո-
40 րանց ձեռից դուրս եկաւ։ Եւ դարձեալ գնաց
Յորդանանի այն կողմը, այն տեղը, որ Յովհաննէսն
էր առաջուց և մկրտում էր. և այնտեղ էր կե-
41 նում։ Եւ շատերը Նորա մօտ եկան և ասում էին,
42 թէ Յովհաննէսը ոչ մի նշան չ'գործեց։ Բայց բոլորն,
ինչ որ Յովհաննէսը Նորա համար ասաց, ճշմարիտ
էր. և այնտեղ շատերը հաւատացին Նորան։

## ԳԼ. ԺԱ.

1 Եւ մի հիւանդ կար, անունը Ղազարոս, Բեթա-
նիայից, Մարիամի և Նորա քոյր Մարթայի գիւ-
2 ղից։ Մարիամն էլ նա էր, որ Տիրոջը իւղով օծեց
և Նորա ոտները սրբեց իր մազերովը. որի եղբայր
3 Ղազարոսը հիւանդ էր։ Եւ Նորա քոյրերն ուղար-
կեցին Նորա մօտ և ասացին. Տէր, ահա նա, որին
4 դու սիրում ես, հիւանդացել է։ Յիսուսն էլ երբոր
լսեց, ասաց. Այս հիւանդութիւնը մեռնելու հա-
մար չէ, այլ Աստուծոյ փառքի համար. որ Աստու-
5 ծոյ Որդին Նորանով փառաւորուի։ Եւ Յիսուսը
սիրում էր Մարթային և Նորա քրոջը և Ղազարո-
6 սին։ Եւ երբոր լսեց, թէ նա հիւանդ է, այն ժա-
7 մանակ երկու օր մնաց այն տեղը, ուր որ էր. Ապա
Նորանից յետոյ ասաց աշակերտներին. Եկէք դար-
8 ձեալ գնանք Հրէաստան։ Աշակերտներն ասացին
Նորան. Ռաբբի, հիմա Հրէաներն ուզում էին քեզ
9 քարկոծել. և դարձեալ անտե՞ղ ես գնում։ Յի-
սուսը պատասխանեց. Չէ՞ որ օրը տասներկու
ժամ ունի. եթէ մէկը ցերեկը ման գայ, չի սահիլ,
10 որովհետեւ այս աշխարհքի լոյսը տեսնում է։ Իսկ



եթէ մէկը գիշերը ման գայ, կ'սահի, որովհետեւ
11 լոյս չ'կայ Նորանում։ Այս ասաց, և սորանից յե-
տոյ ասաց Նորանց. Մեր Ղազարոս բարեկամը քնեց.
12 բայց կ'գնամ, որ զարթնեցնեմ Նորան։ Եւ Նորա
աշակերտներն ասացին Նորան. Տէր, թէ որ քնել
13 է, կ'առողջանայ։ Բայց Յիսուսը Նորա մահուան
համար էր ասել. Նորանք էլ կարծում էին, թէ
14 քուն քնելու համար էր ասում։ Այն ժամանակ
Յիսուսը յայտնի ասաց Նորանց. Ղազարոսը մեռաւ։
15 Եւ ես ուրախ եմ ձեզ համար, որ ես այնտեղ չէի,
որ դուք հաւատաք ինձ. բայց գնանք Նորա մօտ։
16 Եւ ասաց Թովմասը (Երկուորեակ կոչուածը) ա-
շակերտակիցներին. Մենք էլ գնանք Նորա հետ
մեռնենք։
17 Յիսուսն էլ եկաւ՝ Նորան արդէն չորս օր գերեզ-
18 մանի մէջ դրուած գտաւ։ Եւ Բեթանիան մօտ էր
19 Երուսաղէմին տասնեւհինգ ասպարէզի չափ. Եւ
Հրէաներից շատերը եկել էին Մարթայի և Մարիա-
մի մօտ, որ մխիթարեն Նորանց իրանց եղբօր մա-
20 սին։ Արդ երբոր Մարթան լսեց, թէ Յիսուսը գա-
լիս է, գնաց Նորան դիմաւորելու. բայց Մարիամը
21 տանը նստած էր։ Եւ Մարթան ասաց Յիսուսին.
Տէր, եթէ այստեղ լինէիր, իմ եղբայրը չէր մեռ-
22 նիլ։ Բայց հիմա էլ գիտեմ, թէ ինչ որ Աստուա-
23 ծանից խնդրես, Աստուած կ'տայ քեզ։ Յիսուսը
Նորան ասաց. Քո եղբայրը յարութիւն կ'առնէ։
24 Մարթան Նորան ասաց. Գիտեմ որ յարութիւն
25 կ'առնէ յարութիւնումը՝ յետին օրը։ Յիսուսը Նո-
րան ասաց. Ես եմ յարութիւնը և կեանքը. ինձ
26 հաւատացողը թէև մեռնի էլ, կ'ապրի։ Եւ ամեն,
ով որ կենդանի է և ինձ հաւատում է, յաւի-
27 տեան չի մեռնիլ. հաւատո՞ւմ ես սորան։ Նորան
ասաց. Այո, Տէր, ես հաւատացել եմ, թէ դու ես

Քրիստոսն՝ Աստուծոյ Որդին, որ պէտք է աշխարհք
28 գայիր: Եւ երբոր այս ասաց, գնաց թագուն կան-
չեց իր Մարիամ քրոջը, և ասաց. Վարդապետը
29 եկել է և կանչում է քեզ: Նա երբոր լսեց, շու-
30 տով վերկացաւ, և եկաւ նորա մօտ: Յիսուսը դեռ
չէր եկել գիւղը, այլ այն տեղն էր, ուր որ Մար-
31 թան եկաւ նորա առաջը: Բայց Հրէաները, որ
տանը նորա հետ էին և նորան մխիթարում էին,
երբոր Մարիամին տեսան, թէ շուտով վերկացաւ
և գնաց, նորա ետևից գնացին, ասելով թէ Գե-
32 րեզմանն է գնում, որ այն տեղ լայ: Բայց երբոր
Մարիամ այն տեղ եկաւ, ուր Յիսուսն էր, և տե-
սաւ նորան, նորա ոտներն ընկաւ և ասաց նորան.
Տէր, եթէ այստեղ լինէիր, իմ եղբայրը չէր մեռ-
33 նիլ: Յիսուսն էլ երբոր նորան տեսաւ, որ լաց էր
լինում, և նորա հետ եկած Հրէաներն էլ, որ լաց
34 էին լինում, իր հոգովը խռովեց և յուզվեց: Եւ
ասաց. Ո՞ւր դրիք նորան. Նորան ասացին. Տէր, եկ
35 և տես: Յիսուսը արտասուեց: [36] Հրէաներն ա-
37 սում էին. Տես ինչպէս էր սիրում նորան: Նորան-
ցից էլ ոմանք ասում էին. Մի՞թէ սա, որ կոյրի աչ-
քերը բացաւ, չէր կարող անել, որ սա էլ չ'մեռ-
38 նէր: Եւ Յիսուսը դարձեալ խռոված եկաւ գե-
րեզմանը. և այն մի քարայր էր, և մի քար նորա
39 վերայ դրուած: Յիսուսը ասաց. Այդ քարը վեր ա-
ռէք. մեռելի քոյրը՝ Մարթան ասաց նորան. Տէր,
40 արդէն հոտած է. որովհետև չորս օրուայ է: Յի-
սուսը նորան ասաց. Չ'ասացի՞ քեզ, որ եթէ հա-
41 ւատաս, Աստուծոյ փառքը կ'տեսնես: Եւ քարը
վեր առան, ուր որ մեռելը դրուած էր: Յիսուսն
էլ իր աչքերը դէպի վեր բարձրացրեց և ասաց.
42 Հայր, գոհանում եմ քեզանից, որ ինձ լսեցիր: Եւ
ես գիտէի, որ միշտ լսում ես ինձ. բայց այս շրջա-



կայ ժողովրդի համար ասացի, որ հաւատան, թէ
43 դու ուղարկեցիր ինձ: Եւ այս ասելով՝ մեծ ձայնով
44 աղաղակեց. Ղազարոս, դուրս եկ: Եւ մեռելը
դուրս եկաւ՝ ոտները և ձեռքերը պատանով կա-
պած, և երեսը վարշամակով պատած: Յիսուսը նո-
րանց ասաց. Արձակեցէք դորան, և թողէք գնայ:
45 Եւ Հրէաներից շատերը, որ Մարիամի մօտ էին
եկել և տեսան, ինչ որ արաւ Յիսուսը, հաւատա-
46 ցին նորան: Բայց նորանցից ոմանք գնացին Փարի-
սեցիների մօտ. և ասացին նորանց, ինչ որ Յի-
սուսն արաւ:
47 Եւ քահանայապետները և Փարիսեցիները ատ-
եան ժողովեցին և ասացին. Ի՞նչ անենք., որ այդ
48 մարդը շատ նշաններ է անում: Եթէ դորան այդ-
պէս թողենք, ամենքը կ'հաւատան դորան, և
Հռովմայեցիք կ'գան վեր կ'առնեն մեր երկիրն էլ
49 և ազգն էլ: Եւ նորանցից մէկը՝ Կայիափան, որ
այն տարուայ քահանայապետն էր, ասաց նորանց.
50 Դուք ոչինչ չ'գիտէք, Եւ չէք էլ մտածում, որ
լաւ է մեզ համար, որ մէկ մարդ մեռնի ժողովրդի
51 համար, քան թէ բոլոր ազգը կորչի: Բայց սա ի-
րանից չ'ասաց. այլ որովհետև այն տարուայ քա-
հանայապետն էր, մարգարէացաւ, թէ Յիսուսը պի-
52 տի մեռնէր ազգի համար: Եւ ոչ թէ միայն ազգի
համար, այլ որ նա Աստուծոյ ցրուած որդիքն էլ
մէկտեղ ժողովէ:
53 Արդ այն օրից հետէ խորհուրդ արին, որ նորան
54 սպաննեն: Յիսուսն էլ համարձակ չէր ման գալիս
Հրէաների մէջ. այլ այն տեղից գնաց մի երկիր, ա-
նապատի մօտ, Եփրայիմ ասուած քաղաքը. և այն-
տեղ կենում էր իր աշակերտների հետ:
55 Եւ Հրէաների զատիկը մօտ էր, և այն գաւառից
շատերը զատկից առաջ վեր ելան Երուսաղէմ, որ

56 իրանց անձերը սրբեն։ Եւ որոնում էին Յիսուսին
և իրար ասում էին՝ տաճարումը կանգնած. Ի՞նչ-
պէս է երեւում ձեզ. միթէ այս տօնին չի գայ.
բայց քահանայապետները և Փարիսեցիները հրա-
ման էին տուել, որ եթէ մէկը գիտենայ թէ ուր է,
իմաց տայ, որ բռնեն Նորան։

## ԳԼ. ԺԲ.

1 Եւ Յիսուսը զատկից վեց օր առաջ եկաւ Բե-
թանիա, որտեղ մեռած Ղազարոսն էր, որին մե-
2 ռելներից յարութիւն տուաւ։ Եւ այնտեղ հաց-
կերութիւն արին Նորա համար. և Մարթան ծա-
ռայում էր, և Ղազարոսը Նորա հետ սեղան նըս-
3 տողներից մէկն էր։ Մարիամն էլ մի լիտր նարդոսի
ազնիւ մեծագին իւղ առաւ, Յիսուսի ոտները օ-
ծեց, և իր մազերովը սրբում էր Նորա ոտները, և
4 տունը լցուեցաւ իւղի հոտովը։ Եւ ասաց Նորա ա-
շակերտներից մէկը՝ Յուդա Սիմոնեան Իսկարիով-
5 տացին, որ Նորան մատնելու էր. Ի՞նչու համար
այդ իւղը երեք հարիւր դենարի չ՚ծախուեցաւ, և
6 աղքատներին տրուեցաւ։ Բայց սա ասաց, ոչ թէ
որովհետեւ աղքատների համար Նորա հոգն էր. այլ
որ գող էր՝ և քսակն ունէր, և ընկածը պահում
7 էր։ Յիսուսն էլ ասաց. Թոյլ տուր դորան, Նա իմ
8 պատանքի օրուան համար էր պահել այդ։ Որով-
հետեւ աղքատներին միշտ ձեզ հետ ունիք. բայց
ինձ միշտ չ՚ունիք։
9 Եւ Հրէաներից շատ ժողովուրդ գիտաց, թէ Նա
այնտեղ է, և եկան, ոչ թէ միայն Յիսուսի հա-
մար, այլ որ Ղազարոսին էլ տեսնեն, որին մեռել-
10 ներից յարութիւն տուաւ։ Քահանայապետներն
էլ խորհուրդ արին, որ Ղազարոսին էլ սպանեն։



11 Որովհետեւ Հրէաներից շատերը Նորա պատճառովը
գնում էին և հաւատում էին Յիսուսին։
12 Նորա հետեւեալ օրը շատ ժողովուրդ, որ եկել
էին տօնին, երբոր լսեցին, թէ Յիսուսը գալիս է
13 Երուսաղէմ, Արմաւի ծառերի ճղեր առան, և
դուրս գնացին Նորա առաջը և աղաղակում էին.
Ովսաննայ, օրհնեալ է Նա, որ Տիրոջ անունովը գա-
14 լիս է, Իսրայէլի թագաւորը։ Եւ Յիսուսը մի ա-
ւանակ գտաւ, և Նորա վերայ նստեց, ինչպէս գրը-
15 ուած է՝ թէ Մի վախենար, Սիօնի աղջիկ, ահա քո
թագաւորը գալիս է՝ էշի աւանակի վերայ նստած։
16 Եւ Նորա աշակերտներն առաջ չ՚իմացան այս բա-
ները. բայց երբոր Յիսուսը փառաւորուեցաւ, այն
ժամանակ յիշեցին, թէ այս Նորա համար գրուած
17 էր. և թէ այն բանը արին Նորան։ Եւ ժողովուրդը, որ
Նորա հետ էր, վկայում էր, թէ Ղազարոսին գե-
րեզմանիցը դուրս կանչեց և մեռելներից յարու-
18 թիւն տուաւ Նորան։ Եւ Նորա համար էլ ժողո-
վուրդը գնաց Նորա առաջը, որ լսեցին, թէ Նա ա-
19 րել էր այն նշանը։ Բայց Փարիսեցիներն իրար մէջ
ասում էին. Տեսնո՞ւմ էք, որ ոչինչ օգուտ չ՚ու-
նիք. ահա աշխարհքը Նորա ետեւից գնաց։
20 Եւ կային ոմանք Հելլենացիք՝ նորանցից, որ ե-
կել էին այնտեղ, որ երկրպագեն այն տօնումը։
21 Նորանք եկան Փիլիպպոսի մօտ, որ Գալիլեայի Բեթ-
սայիդայից էր, նորան խնդրում էին և ասում.
22 Տէր, կամենում ենք Յիսուսին տեսնել։ Փիլիպպոսը
գալիս է Անդրէասին ասում. Անդրէասը և Փի-
23 լիպպոսը ասում են Յիսուսին։ Յիսուսն էլ պա-
տասխանեց նորանց՝ և ասաց. Ժամը հասաւ, որ
24 մարդի Որդին փառաւորուի։ Ճշմարիտ ճշմարիտ
ասում եմ ձեզ. եթէ ցորենի հատը հողի մէջ
չ՚ընկնի և մեռնի, ինքը մենակ կ՚մնայ. բայց եթէ

25 մեռնի, շատ պտուղ կ'բերէ։ Իր անձը սիրողը կը
կորցնէ նորան, և իր անձը ատողը այս աշխարհքու-
մը յաւիտենական կեանքի մէջ կ'պահէ նորան։
26 Եթէ մէկը ծառայ է ինձ, թող նա իմ ետեւից գայ.
և ուր ես եմ, այնտեղ էլ իմ պաշտօնեան կ'լինի.
եթէ մէկը ծառայէ ինձ, Հայրը կ'պատուէ նորան։
27 Հիմա իմ անձը խռոված է. և ինչ ասեմ. Հայր,
ազատիր ինձ այս ժամիցը. սակայն խոկ սորա հա-
28 մար եկայ այս ժամի մէջ։ Հայր, փառաւորիր քո
անունը։ Եւ երկնքից ձայն եկաւ, թէ Փառաւո-
29 րեցի էլ և դարձեալ կ'փառաւորեմ։ Եւ ժողո-
վուրդը, որ կանգնած էր և լսում էր, ասում էին.
Որոտմունք եղաւ. ուրիշներն ասում էին. Հրեշտակ
30 խօսեց նորա հետ։ Յիսուսը պատասխանեց և ասաց.
Այս ձայնը ոչ թէ ինձ համար եղաւ, այլ ձեզ
31 համար։ Հիմա դատաստան է այս աշխարհքի. հի-
32 մա այս աշխարհքի իշխանը դուրս կ'գցուի։ Եւ ես
երբոր բարձրանամ երկրիցը, ամենքին կ'քաշեմ
33 ինձ մօտ։ Եւ այս ասում էր, որ ցոյց տայ, թէ
34 ինչպիսի մահով պիտի մեռնի։ Ժողովուրդը պա-
տասխանեց նորան. Մենք օրէնքիցը լսեցինք, թէ
Քրիստոսը յաւիտեան կ'կենայ. և դու ինչպէս ես
ասում, թէ պէտք է մարդի Որդին բարձրանայ.
35 ով է այդ մարդի Որդին։ Յիսուսն էլ ասաց նո-
րանց. Մի քիչ ժամանակ դեռ լոյսը ձեզ հետ է.
գնացէք, քանի որ լոյսն ունիք, որ խաւարը ձեզ
չ'հասնէ. և խաւարումը գնացողը չ'գիտէ, թէ ուր
36 է գնում։ Քանի որ լոյսն ունիք, հաւատացէք լոյ-
սին, որ լոյսի որդիք լինիք։ Յիսուսը այս բանը խօ-
սեց, և գնաց թագցուեցաւ նորանցից։
37 Եւ թէպէտ նա այնքան նշաններ արել էր նո-
րանց առաջին, նորանք չէին հաւատում նորան.
38 Որ Եսայիա մարգարէի խօսքը կատարուի, որ ասաց.



Տէր, ով հաւատաց մեր լուրին, և Տիրոջ բազուկը
39 ում յայտնուեցաւ։ Նորա համար չէին կարողա-
նում հաւատալ, որ Եսայիան դարձեալ ասում
40 է. Նորանց աչքերը կուրացրեց, և նորանց սրտերը
թմրացրեց, որ աչքով չ'տեսնեն, և սրտով չ'իմա-
41 նան, և դառնան՝ և ես բժշկեմ նորանց։ Եսայիան
սա ասաց, երբոր նորա փառքը տեսաւ, և նորա հա-
42 մար խօսեց։ Բայց և այնպէս իշխաններիցը շատերը
հաւատացին նորան. սակայն Փարիսեցիների պատ-
ճառով չէին դաւանում, որ ժողովարանիցը դուրս
43 չ'գցուին։ Որովհետեւ մարդկանց փառքն աւելի
սիրեցին քան թէ Աստուծոյ փառքը։
44 Եւ Յիսուսը աղաղակում էր և ասում. Ինձ հա-
ւատացողը չէ թէ ինձ է հաւատում, այլ ինձ ու-
45 ղարկողին։ Եւ ինձ տեսնողը ինձ ուղարկողին է
46 տեսնում։ Ես լոյս եկայ աշխարհքը, որ ամեն ինձ
47 հաւատացողը խաւարի մէջ չ'մնայ։ Եւ եթէ մէկն
իմ խօսքերը լսէ և չ'հաւատայ, ես չեմ դատել
նորան. որովհետեւ ես չ'եկայ որ աշխարհքը դա-
48 տեմ, այլ որ փրկեմ աշխարհքը։ Ինձ անարգողը
և իմ խօսքերը չ'ընդունողը ունի իրան դատողին.
այն խօսքն՝ որ ես խօսեցի, նա կ'դատէ նորան յե-
49 տին օրը։ Որովհետեւ ես իմ անձիցը չ'խօսեցի, բայց
ինձ ուղարկող Հայրը, նա պատուէր տուաւ ինձ,
50 թէ ինչ պիտի ասեմ և ինչ պիտի խօսեմ։ Եւ
գիտեմ, որ նորա պատուիրանքը յաւիտենական
կեանք է. ուրեմն ինչ որ ես խօսում եմ, ինչպէս
Հայրն ասաց ինձ՝ այնպէս եմ խօսում։

## ԳԼ. ԺԳ.

1 Զատկի տօնից առաջ՝ Յիսուսը գիտաց, որ իր
ժամը հասել է, որ այս աշխարհքիցը փոխուի դէպի

Հայրը, իւրաններին, որ այս աշխարհքումն էն, սի-
րեց. և մինչև վերջը սիրեց նորանց։
2 Եւ երբոր ընթրիք էր լինում, սատանան արդէն
Յուդա Սիմոնեան Իսկարիովտացու սրտի մէջ էր
3 գցել, որ մատնէ նորան։ Յիսուսը գիտենալով, որ
Հայրն ամեն բան իր ձեռն է տուել, և որ Աս-
տուածանից դուրս եկաւ, և Աստուծոյ մօտ է գը-
4 նում. Ընթրիքից վերկացաւ և հանդերձները վայր
դրաւ, և մի ղենջակ առաւ իր մէջքը պատեց.
5 Յետոյ ջուր ածեց կոնքը, և սկսեց աշակերտների
ոտները լուանալ, և այն ղենջակովը սրբել, որ մէջ-
6 քին պատած էր։ Եւ Սիմոն Պետրոսի մօտ եկաւ.
և նա նորան ասաց. Տէր, դո՞ւ ես իմ ոտները լուա-
7 նում։ Յիսուսը պատասխանեց և ասաց նորան. Ինչ
որ ես անում եմ, դու հիմա չես իմանում, բայց
8 սորանից յետոյ կ'իմանաս։ Պետրոսը նորան ասաց.
Դու իմ ոտներս չես լուանալ յաւիտեան. Յիսուսը
պատասխանեց նորան. Եթէ քեզ չ'լուանամ, ինձ
9 հետ բաժին չ'ունիս։ Սիմոն Պետրոսը ասաց նորան.
Տէր, ոչ թէ իմ ոտները միայն, այլ իմ ձեռքերը
10 և գլուխն էլ։ Յիսուս նորան ասաց. Լուացուածին
բան պէտք չէ, բացի ոտները լուանալ. այլ բոլո-
րովին մաքուր է. և դուք մաքուր էք, բայց ոչ թէ
11 ամենքդ։ Որովհետեւ գիտէր իւրան մատնիչին. նորա
12 համար ասաց. Ոչ թէ ամենքդ մաքուր էք։ Եւ
երբոր նորանց ոտները լուացաւ, իր հանդերձներն
առաւ՝ և դարձեալ սեղան նստեց, և նորանց ա-
13 սաց. Գիտէ՞ք ես ինչ արի ձեզ։ Դուք ինձ կան-
չում էք Վարդապետ և Տէր, և լաւ էք ասում,
14 որովհետեւ եմ։ Արդ եթէ ես Տէրս և Վարդա-
պետս՝ ձեր ոտները լուացի, դուք էլ պէտք է ի-
15 րար ոտները լուանաք։ Որովհետեւ ես ձեզ օրինակ
տուի, որ ինչպէս ես ձեզ արի, դուք էլ անէք։



16 Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ ձեզ. Ծառան իր
տէրից մեծ չէ. ոչ էլ ուղարկուածը մեծ է իրան
17 ուղարկողից։ Եթէ այս գիտէք, երանելի էք՝ թէ
18 որ այս անէք։ Ձեր բոլորիդ համար չեմ ասում.
ես գիտեմ նորանց, որ ընտրեցի. բայց որ գրուածը
կատարուի. թէ Նա, որ ինձ հետ հաց էր ուտում,
19 ինձ դէմ իրան կրունկը բարձրացրեց։ Հիմիկուց
ասում եմ ձեզ՝ լինելուց առաջ, որ երբոր լինի՝
20 հաւատաք թէ ես եմ։ Ճշմարիտ ճշմարիտ ասում
եմ ձեզ. Ով որ ընդունէ նորան, որ ես կ'ուղար-
կեմ, ինձ է ընդունում. և ինձ ընդունողը ինձ ու-
ղարկողին է ընդունում։
21 Յիսուսն այս ասելով տրտմեց հոգովը, և վկայեց
և ասաց. Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ ձեզ, թէ
22 Ձեզանից մէկը կ'մատնէ ինձ։ Աշակերտներն էլ ի-
րար մտիկ էին տալիս տարակուսած, թէ ո՞ւմ հա-
23 մար է ասում։ Եւ նորա աշակերտներից մէկը Յի-
սուսի գոգին նստած էր, որին Յիսուսը սիրում էր։
24 Սիմոն Պետրոսը նորան ակնարկեց որ հարցնէ, թէ
25 նա ո՞վ է, որի համար ասում է։ Եւ նա Յիսուսի
լանջքովն ընկած, ասաց նորան. Տէր, նա ո՞վ է։
26 Յիսուսը պատասխանեց. Նա է՝ որ ես պատառը
թաց կ'անեմ և նորան կ'տամ. և պատառը թաց
արաւ և տուաւ Յուդա Սիմոնեան Իսկարիովտա-
27 ցուն։ Եւ պատառից յետոյ սատանան մտաւ նո-
րա մէջ. և Յիսուսը նորան ասաց. Ինչ որ անում
28 ես՝ շուտով արա։ Եւ այս բանը սեղան նստողնե-
րից ոչ ով չ'իմացաւ, թէ ինչ պատճառով ասաց
29 նորան։ Որովհետեւ ոմանք կարծում էին, թէ ո-
րովհետեւ Յուդան քսակն ունէր, Յիսուս նորան
ասաց, թէ Առ՝ ինչ որ այս տօնին պէտք է մեզ.
30 կամ թէ աղքատներին բան տայ։ Եւ նա երբոր
պատառն առաւ, շուտով դուրս գնաց. և գիշեր էր։

31 Եւ երբոր դուրս գնաց, Յիսուսն ասաց. Հիմա
մարդի Որդին փառաւորուեցաւ. և Աստուած Նո-
32 րանում փառաւորուեցաւ: Եթէ Աստուած Նորա-
նում փառաւորուեցաւ, Աստուած էլ Նորան կը
փառաւորէ իր անձումը. և շուտով կ'փառաւորէ
33 Նորան: Որդեակք, տակաւին մի քիչ ժամանակ էլ
ձեզ հետ եմ. ինձ կ'որոնէք, և ինչպէս Հրէանե-
րին ասացի, թէ Որտեղ որ ես եմ գնում, դուք
չէք կարող գալ, և հիմա էլ ձեզ եմ ասում:
34 Նոր պատուիրանք եմ տալիս ձեզ, որ իրար սիրէք.
ինչպէս ես ձեզ սիրեցի, որ դուք էլ իրար սիրէք:
35 Սորանով կ'գիտենան ամենքը, թէ իմ աշակերտա-
36 ներն էք, եթէ իրար վերայ սէր ունենաք: Սիմոն
Պետրոսը Նորան ասաց. Տէր, ո՞ւր ես գնում. Յի-
սուսը պատասխանեց Նորան. Որ տեղ որ ես գնում
եմ, դու հիմա չես կարող իմ ետևից գալ. բայց
37 յետոյ իմ ետևից կ'գաս: Պետրոսը Նորան ասաց.
Տէր, ի՞նչու չեմ կարող հիմա քո ետևից գալ.
38 իմ անձը քեզ համար կ'դնեմ: Յիսուսը պատաս-
խանեց Նորան. Քո անձը կ'դնես ինձ համար. ճըշ-
մարիտ ճշմարիտ ասում եմ քեզ, որ հաւը դեռ չի
խօսիլ, որ դու երեք անգամ կ'ուրանաս ինձ:

## ԳԼ. ԺԴ.

1 Ձեր սիրտերը թող չ'խռովին, Աստուծուն հաւա-
2 տացէք, և ինձ հաւատացէք: Իմ Հօր տանը շատ
բնակարաններ կան. ապա թէ ոչ ես ձեզ կ'ասէի.
3 Գնում եմ ձեզ համար տեղ պատրաստելու: Եւ
եթէ գնամ և ձեզ համար տեղ պատրաստեմ,
դարձեալ կ'գամ և ձեզ ինձ մօտ կ'առնեմ. որ
4 ուր ես եմ, դուք էլ լինէք: Եւ որ տեղ որ ես
գնում եմ՝ գիտէք, և ճանապարհը գիտէք:



5 Թովմասը Նորան ասաց. Տէր, մենք չ'գիտենք թէ
որ տեղ ես գնում. և ի՞նչպէս կարող ենք ճանա-
6 պարհը գիտենալ: Յիսուսը Նորան ասաց. Ես եմ
ճանապարհը և ճշմարտութիւնը և կեանքը. ոչ ով
7 չի գալիս Հօր մօտ, եթէ ոչ ինձանով: Եթէ ինձ
գիտենայիք, իմ Հօրն էլ կ'գիտենայիք. և սորանից
յետոյ կ'գիտենաք Նորան և տեսաք Նորան:
8 Փիլիպպոսը Նորան ասաց. Տէր, Հայրը ցոյց տուր
9 մեզ, և բաւական է մեզ: Յիսուսը Նորան ասաց.
Այսքան ժամանակ ձեզ հետ եմ, եւ ինձ չ'ճանա-
չեցի՞ր, Փիլիպպոս. ինձ տեսնողը Հօրը տեսաւ. և
դու ի՞նչպէս ես ասում. Հայրը ցոյց տուր մեզ:
10 Չե՞ս հաւատում, որ ես Հօր մէջ եմ, եւ Հայրն
ինձանում է. այն բանն, որ ես խօսում եմ ձեզ
հետ, իմ անձիցը չեմ խօսում. բայց Հայրը՝ որ ին-
ձանում բնակած է, Նա է գործում այդ գործերը:
11 Հաւատացէք ինձ, որ ես Հօր մէջ եմ, և Հայրն
12 ինձանում է: Ապա թէ ոչ, իսկ այն գործերի հա-
մար հաւատացէք ինձ. Ճշմարիտ ճշմարիտ ասում
եմ ձեզ, թէ ինձ հաւատացողը այն գործերն, որ ես
գործում եմ, Նա էլ կ'գործէ, և Նորանցից էլ ա-
ւելի մեծ բաներ կ'գործէ. որովհետեւ ես իմ Հօր
13 մօտ եմ գնում: Եւ ինչ որ էլ խնդրէք իմ անու-
նովը, այն կանեմ, որ Հայրը փառաւորուի Որդու-
14 մը: Եթէ իմ անունովը մի բան խնդրէք. ես կ'ա-
15 նեմ: Եթէ ինձ սիրում էք, իմ պատուիրանքները
16 պահեցէք: Եւ ես Հօրը կ'աղաչեմ, և ուրիշ Մխի-
թարիչ կ'տայ ձեզ, որ միշտ ձեզ հետ լաւիտեան:
17 Ճշմարտութեան Հոգին, որին աշխարհքս կարող չէ
ընդունել, որ չէ տեսնում Նորան. և ոչ էլ ճա-
նաչում Նորան. բայց դուք Նորան ճանաչում էք,
որովհետեւ ձեզ մօտ է մնում և ձեզ հետ կ'լինի:
18 Ձեզ որբ չեմ թողիլ. կ'գամ ձեզ մօտ: (19) Մի

փոքր ժամանակ էլ, և աշխարհքն էլ չի տեսնիլ
ինձ, բայց դուք կ՚տեսնէք ինձ. որովհետև ես կեն-
20 դանի եմ, և դուք կենդանի կ՚լինիք։ Այն օրը
դուք կ՚ճանաչէք, որ ես իմ Հօր մէջ եմ, և դուք
21 ինձանում, և ես ձեզանում։ Ով որ իմ պատուի-
րանքներն ունի և նորանց պահում է, նա է ինձ
սիրողը. և ինձ սիրողն իմ Հօրիցը կ՚սիրուի. և ես
կ՚սիրեմ նորան, և ինձ կ՚յայտնեմ նորան։
22 Ասաց նորան Յուդան՝ ոչ թէ Իսկարիովտացին.
Տէր, ինչ է, որ մեզ կ՚յայտնես քեզ՝ և աշխարհ-
23 քին ոչ։ Յիսուսը պատասխանեց և նորան ասաց.
Եթէ մէկն ինձ սիրում է, իմ խօսքը կ՚պահէ և
իմ Հայրը կ՚սիրէ նորան. և նորա մօտը կ՚գանք և
24 բնակութիւն կ՚անենք նորա մօտ։ Ինձ չ՚սիրողը իմ
խօսքերը չէ պահում. և այն խօսքը, որ լսում էք,
25 իմը չէ, այլ ինձ ուղարկող Հօրը։ Այս խօսեցի ձեզ
26 հետ՝ քանի որ ձեզ մօտ եմ։ Բայց Մխիթարիչը,
Սուրբ Հոգին, որ Հայրը կ՚ուղարկէ իմ անունովը,
նա ամեն բան կ՚սովորեցնէ ձեզ, և կ՚յիշեցնէ ձեզ
27 ամեն ինչ որ ձեզ ասացի։ Խաղաղութիւն եմ թո-
ղում ձեզ, իմ խաղաղութիւնն եմ տալիս ձեզ.
ոչ թէ ինչպէս աշխարհքն է տալիս՝ ես տալիս եմ
28 ձեզ. ձեր սիրտը չխռովի և չ՚վախենայ։ Լսեցիք,
որ ես ասացի ձեզ, թէ Գնում եմ, և կ՚գամ ձեզ
մօտ. եթէ ինձ սիրէիք, ապա ուրախ կ՚լինէիք՝ որ
ասացի, Հօր մօտ եմ գնում. որովհետև իմ Հայրը
29 մեծ է ինձանից։ Եւ հիմա ասացի ձեզ՝ լինելուց
30 առաջ, որ երբոր լինի, հաւատաք։ Այլ ես շատ
չեմ խօսիլ ձեզ հետ, որովհետև այս աշխարհքի
31 իշխանը գալիս է, և ինձանում ոչինչ չ՚ունի։ Այլ
որպէս զի աշխարհքը իմանայ, թէ ես սիրում եմ
Հօրը և ինչպէս Հայրը պատուիրեց ինձ, այնպէս
եմ անում. վեր կացէք, գնանք այս տեղից։



## ԳԼ. ԺԵ.

1 Ես եմ ճշմարիտ որթը, և իմ Հայրը մշակն է։
2 Ամեն ճիւղ, որ ինձանում է և պտուղ չէ բե-
րում, նա կտրում է նորան. և ամեն պտուղ բե-
րողին մաքրում է, որ էլ աւելի պտղաբեր լինի։
3 Դուք արդէն մաքուր էք այն խօսքի համար, որ
4 ձեզ հետ խօսեցի։ Կացէք ինձանում՝ և ես ձեզա-
նում. ինչպէս որ ճիւղն իր անձիցը կարող չէ պը-
տուղ բերել, եթէ որթումը չ՚մնայ, այնպէս ոչ էլ
5 դուք՝ եթէ ինձանում չ՚մնաք։ Ես որթն եմ՝ դուք
ճիւղերը. նա որ ինձանում մնում է, և ես նորա-
նում, նա շատ պտուղ է բերում. որովհետև ա-
6 ռանց ինձ չէք կարող ոչինչ անել։ Եթէ մէկն ին-
ձանում չէ մնում, նա դուրս կ՚գցուի ինչպէս ճիւղը,
և կ՚չորանայ. և ժողովում են նորանց և կրակի
7 մէջ գցում, և այրվում է։ Եթէ կենաք ինձանում
և իմ խօսքերը ձեզանում կենան, ինչ որ էլ կա-
8 մենաք, կ՚խնդրէք, և կ՚լինի ձեզ։ Սորանով փա-
ռաւորուեցաւ իմ Հայրը, որ շատ պտուղ բերէք.
և իմ աշակերտները լինիք։
9 Ինչպէս իմ Հայրն ինձ սիրեց, ես էլ ձեզ սիրեցի.
10 կացէք իմ սէրի մէջ։ Եթէ իմ պատուիրանքները
պահէք, իմ սէրի մէջ կ՚կենաք. ինչպէս ես իմ Հօր
պատուիրանքները պահեցի, և կենում եմ նորա սէրի
11 մէջ։ Այս բաները խօսեցի ձեզ հետ, որ իմ ուրա-
խութիւնը ձեզանում մնայ, և ձեր ուրախութիւնը
12 լցուած լինի։ Սա է իմ պատուիրանքը, որ իրար
13 սիրէք, ինչպէս որ ես ձեզ սիրեցի։ Ոչ ով նորա-
նից աւելի մեծ սէր չ՚ունի, որ մէկն իր անձը դնէ
14 իր բարեկամների համար։ Դուք իմ բարեկամներն
էք, եթէ անէք, ինչ որ ես պատուիրում եմ ձեզ։

15 Այլ ես ծառայ չեմ ասում ձեզ, որովհետեւ ծա-
ռան չ'գիտէ, թէ իր տէրն ինչ է գործում. բայց ձեզ
բարեկամ ասացի, որովհետեւ ամեն ինչ որ լսեցի
16 իմ Հօրիցն, իմացրի ձեզ: Ոչ թէ դուք ինձ ընտ-
րեցիք, այլ ես ընտրեցի ձեզ, և ձեզ դրի, որ դուք
գնաք և պտուղ բերէք. և ձեր պտուղը մնայ. որ-
պէս զի ինչ որ իմ Հօրիցը խնդրէք իմ անունովը,
17 տայ ձեզ: Սա եմ պատուիրում ձեզ, որ իրար
սիրէք:
18 Եթէ աշխարհքը ձեզ ատում է, գիտացէք, որ
19 ինձ ձեզանից առաջ է ատել: Եթէ այս աշխարհ-
քիցը լինէիք, ապա աշխարհքն իրանը կ'սիրէր. բայց
որովհետեւ աշխարհքիցը չէք, այլ ես ձեզ ընտրեցի
աշխարհքիցը, նորա համար աշխարհքն ատում է
20 ձեզ: Յիշեցէք այն խօսքն, որ ես ասացի ձեզ, թէ
ծառան իր տէրիցը մեծ չէ. եթէ ինձ հալածեցին,
ձեզ էլ են հալածելու. եթէ իմ խօսքը պահե-
21 ցին՝ ձերն էլ կ'պահեն: Բայց այս ամենը կ'անեն
ձեզ իմ անունի համար. որովհետեւ չ'ճանաչեցին
22 ինձ ուղարկողին: Եթէ ես չէի եկել և նորանց
հետ խօսել, նորանք մեղք չէին ունենալ, բայց
հիմա պատճառանք չ'ունեն իրանց մեղքի համար:
23 Ինձ ատողն իմ Հօրն էլ է ատում: (24) Եթէ
այն գործերը չէի գործել նորանց միջումը, որ
մէկ ուրիշը չ'գործեց. մեղք չէին ունենալ. բայց
հիմա տեսան էլ, և ատեցին ինձ էլ և իմ Հօրն էլ:
25 Այլ այս եղաւ որպէս զի այն խօսքը կատարուի, որ
նորանց օրէնքումը գրուած է, թէ Զուր ատեցին ա-
26 տեցին ինձ: Բայց երբոր Մխիթարիչը կ'գայ, որ ես
Հօրիցը կ'ուղարկեմ ձեզ, ճշմարտութեան Հոգին,
որ Հօրիցն է դուրս գալիս, նա կ'վկայէ ինձ հա-
27 մար: Եւ դուք էլ կ'վկայէք, որովհետեւ սկզբիցն
ինձ հետ էք:



ԳԼ. ԺԶ.

1 Այս խօսեցի ձեզ հետ, որ չ'գայթակղիք:
2 Իրանց ժողովարաններիցը ձեզ դուրս կ'հանեն. և
ժամանակ էլ կ'գայ, որ ամեն ով որ սպանէ ձեզ,
կ'կարծէ, թէ Աստուծուն պաշտօն է մատուցա-
3 նում: Եւ սա կ'անեն ձեզ, որովհետեւ ոչ Հօրը
4 ճանաչեցին և ոչ ինձ: Այս էլ խօսեցի ձեզ հետ,
որ երբոր ժամանակը գայ, սորանք յիշէք, թէ ես
ասացի ձեզ· Բայց այս բաներն սկզբիցը չ'ասացի
ձեզ. որովհետեւ ես ձեզ հետ էի:
5 Բայց հիմա ինձ ուղարկողի մօտ եմ գնում. և
ձեզանից ոչ մէկը չէ հարցնում ինձ, թէ Ո՞ւր ես
6 գնում: Այլ որովհետեւ այս բաները խօսեցի ձեզ
7 հետ, տրտմութիւնը լցրեց ձեր սիրտը: Բայց ես
ճշմարտութիւնն եմ ասում ձեզ, թէ լաւ է ձեզ
համար, որ ես գնամ. որովհետեւ եթէ չ'գնամ,
Մխիթարիչը չի գալ ձեզ մօտ. բայց եթէ գնամ,
8 նորան կ'ուղարկեմ ձեզ մօտ: Եւ նա՝ երբոր գայ,
աշխարհքին կ'յանդիմանէ մեղքի համար, և ար-
դարութեան համար, և դատաստանի համար:
9 Մեղքի համար, որովհետեւ ինձ չեն հաւատում:
10 Արդարութեան համար, որովհետեւ ես իմ Հօր մօտ
11 եմ գնում, և ինձ այլ եւս չէք տեսնիլ: Եւ դա-
տաստանի համար, որովհետեւ այս աշխարհքի իշխանը
12 դատապարտուած է: Տակաւին շատ բան ունիմ
13 ձեզ ասելու. բայց հիմա չէք կարող տանիլ: Բայց
երբոր նա՝ ճշմարտութեան Հոգին կ'գայ, նա կ'ա-
ռաջնորդէ ձեզ ամեն ճշմարտութեան մէջ. որով-
հետեւ իր անձիցը չի խօսիլ, այլ ինչ որ կլսէ՝ կը
14 խօսի, և գալու բաները կ'պատմէ ձեզ: Նա ինձ
կ'փառաւորէ, որովհետեւ իմիցը կ'առնէ և կ'պատ-

15 մէ ձեզ։ Ամեն ինչ որ Հայրն ունի՝ իմն է. նորա
համար ասացի ձեզ, թէ իմիցը կ'առնէ և կ'պատ-
16 մէ ձեզ։ Մի քիչ ժամանակ էլ, և չէք տեսնիլ ինձ.
և դարձեալ մի քիչ, և կ'տեսնէք ինձ. որովհետև
ես Հօր մօտ եմ գնում։
17 Նորա աշակերտներից ոմանք իրար ասում էին.
Սա ինչ է, որ ասում է մեզ. Մի քիչ ժամանակ՝ և
չէք տեսնիլ ինձ, և դարձեալ մի քիչ, և կ'տես-
18 նէք ինձ, և թէ ես Հօր մօտ եմ գնում։ Եւ ա-
սում էին. Ի՞նչ է այն որ ասում է՝ Քիչ ժամանակ.
19 մենք չ'գիտենք, թէ ինչ է խօսում։ Եւ Յիսուսը
իմացաւ, որ ուզում էին հարցնել իրան, և ասաց
նորանց. Դորա՞ համար էք հարցնում իրար, որ
ասացի, թէ Մի քիչ ժամանակ, և չէք տեսնիլ ինձ,
20 և դարձեալ մի քիչ, և կ'տեսնէք ինձ։ Ճշմարիտ
ճշմարիտ ասում եմ ձեզ, որ դուք լաց կ'լինիք և
կ'ողբաք և աշխարհքը կ'ուրախանայ. դուք կը
տրտմիք, այլ ձեր տրտմութիւնն ուրախութիւն կը
21 լինի։ Կինը, երբոր ծնում է, տրտմութիւն ունի,
որ նորա ժամանակը հասել է, բայց երբոր երե-
խան ծնեց, նեղութիւնն էլ չէ յիշում այն ուրա-
խութեան համար, որ մի մարդ ծնուեցաւ աշ-
22 խարհքի մէջ։ Եւ դուք էլ հիմա տրտմութիւն
ունիք, բայց դարձեալ կ'տեսնեմ ձեզ, և ձեր
սիրտը կ'ուրախանայ. և ձեր ուրախութիւնը ոչ ոք
23 չի առնիլ ձեզանից։ Եւ այն օրը ոչինչ չէք հար-
ցնիլ ինձ. Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ ձեզ, թէ
ինչ որ Հօրիցը խնդրէք իմ անունովը, կ'տայ ձեզ։
24 Մինչև հիմա ոչինչ չ'խնդրեցիք իմ անունովը.
խնդրեցէք և կ'առնէք, որ ձեր ուրախութիւնը
25 կատարեալ լինի։ Այս բաներն առակներով խօսե-
ցի ձեզ հետ. բայց ժամանակ կ'գայ, որ էլ առա-
կով չեմ խօսիլ ձեզ հետ. այլ յայտնապէս կը



26 պատմեմ ձեզ Հօր համար։ Այն օրումն իմ անու-
նովը կ'խնդրէք. և չեմ ասում ձեզ, թէ ես ձեզ
27 համար կ'աղաչեմ Հօրը, Նորա համար, որ Հայրն
ինքը սիրում է ձեզ. որովհետև դուք ինձ սիրել
էք և հաւատացել էք, թէ ես Աստուածանից
28 դուրս եկայ։ Հօրիցը դուրս եկայ և եկայ աշխարհք.
դարձեալ թողում եմ աշխարհքը և գնում եմ
Հօր մօտը։
29 Աշակերտները նորան ասացին. Ահա հիմա յայտ-
30 նի ես խօսում, և ոչ մի առակ չես ասում։ Հիմա
գիտենք, որ դու բոլորը գիտես. և պէտք չէ, որ
մէկը հարցնէ քեզ. սորանով հաւատում ենք, թէ
31 դու Աստուածանից դուրս եկար։ Յիսուսը պա-
32 տասխանեց նորանց. Հիմա հաւատում էք։ Ահա
ժամանակ կ'գայ, և հիմա եկած է, որ ամեն մէկդ
կ'ցրուիք իր տեղը, և ինձ մենակ կ'թողէք. բայց ես
33 մենակ չեմ. որովհետև Հայրն ինձ հետ է։ Այս
բաները խօսեցի ձեզ հետ, որ ինձանում խա-
ղաղութիւն ունենաք. աշխարհքումը նեղութիւն
կ'ունենաք. բայց քաջացէք, ես յաղթել եմ աշ-
խարհքին։

## ԳԼ. ԺԷ.

1 Յիսուսը այս խօսեց, և իր աչքերը բարձրացրեց
դէպի երկինքը և ասաց. Հայր, ժամը հասել է,
փառաւորիր քո Որդուն, որ քո Որդին էլ քեզ
2 փառաւորէ. Ինչպէս նորան իշխանութիւն տուիր
ամեն մարմնի վերայ, որ յաւիտենական կեանք տայ
3 այն ամենին, որ տուիր նորան։ Եւ սա է յաւիտե-
նական կեանքը, որ ճանաչեն քեզ միայն ճշմարիտ
Աստուած. և նորան, որ ուղարկեցիր՝ Յիսուսին
4 Քրիստոսին։ Ես քեզ փառաւորեցի երկրի վերայ,

այն գործը կատարեցի, որ տուիր ինձ՝ որ անեմ։
5 Եւ հիմա, փառաւորիր ինձ դու, Հայր, քեզ մօտ
այն փառքովը, որ աշխարհքի լինելուցն առաջ ու-
6 նէի քեզ մօտ։ Քո անունը յայտնեցի այն մարդ-
կանց, որ աշխարհքիցը տուիր ինձ. քոնն էին, և
7 ինձ տուիր նորանց. և քո խօսքը պահեցին։ Հիմա
իմացան, որ այն ամենը, որ ինձ տուիր, քեզանից է.
8 Որովհետև այն խօսքն, որ ինձ տուիր, ես նորանց
տուի. և նորանք ընդունեցին. և ճշմարտութեամբ
իմացան, որ քեզանից դուրս եկայ. և հաւատա-
9 ցին, թէ դու ուղարկեցիր ինձ։ Ես նորանց համար
եմ աղաչում. ոչ թէ աշխարհքի համար եմ ա-
ղաչում. այլ նորանց համար, որ ինձ տուիր, որ
10 քոնն են։ Եւ ինչ որ իմն է, բոլորը քոնն է. և ինչ
որ քոնն է՝ իմն է. և ես փառաւորուած եմ նո-
11 րանցում։ Եւ ես այլ ես աշխարհքումս չեմ, իսկ
նորանք աշխարհքումս են, և ես քեզ մօտ եմ գա-
լիս. ով Սուրբ Հայր, պահիր նորանց քո անունովը,
որոնց տուիր ինձ, որ մէկ լինեն ինչպէս մենք։
12 Երբոր ես աշխարհքումը նորանց հետ էի, ես էի
պահում նորանց քո անունովը. նորանց որ տուիր
ինձ, պահեցի. և նորանցից ոչ մէկը չ'կորաւ. բայց
միայն կորստի որդին, որ գրուածը կատարուի։
13 Բայց հիմա ես քեզ մօտ եմ գալիս. և այս բա-
նը խօսում եմ աշխարհքումը, որ իմ ուրախու-
թիւնը կատարեալ ունենան իրանց անձերումը։
14 Եւ քո խօսքը նորանց տուի, և աշխարհքը նորանց
ատեց, որովհետև աշխարհքիցը չեն, ինչպէս ես էլ
15 աշխարհքիցը չեմ։ Ես չեմ աղաչում, որ աշխարհ-
քիցը վեր առնես նորանց. այլ որ նորանց պահես
16 չարիցը։ Այս աշխարհքիցը չեն, ինչպէս ես էլ աշ-
17 խարհքիցը չեմ։ Նորանց սուրբ արա քո ճշմար-
18 տութիւնովը. քո խօսքը ճշմարտութիւն է։ Ինչ-



պէս դու ինձ ուղարկեցիր աշխարհք, ես էլ նո-
19 րանց ուղարկեցի աշխարհք։ Եւ ես նորանց համար
իմ անձը սուրբ եմ անում, որ նորանք էլ ճշմարտու-
20 թիւնով սրբուած լինեն։ Բայց ոչ թէ միայն
նորանց համար եմ աղաչում, այլ նորանց համար
21 էլ, որ նորանց խօսքովը կ'հաւատան ինձ։ Որ ա-
մենքը մէկ լինեն, ինչպէս դու, Հայր, ինձանում,
և ես քեզանում, որ նորանք էլ մեզանում մէկ
լինեն. որ աշխարհքը հաւատայ, թէ դու ուղար-
22 կեցիր ինձ։ Եւ ես այն փառքն, որ ինձ տուիր, նո-
րանց տուի, որ մէկ լինեն, ինչպէս մենք էլ մէկ
23 ենք. Ես նորանցում՝ և դու ինձանում, որ կա-
տարեալ լինեն միութիւնում, որպէս զի աշխարհքը
գիտենայ, թէ դու ուղարկեցիր ինձ. և սիրեցիր նո-
24 րանց, ինչպէս ինձ սիրեցիր։ Հայր, նորանք որ ինձ
տուիր, կամենում եմ, որ ինչ տեղ որ ես եմ, նո-
րանք էլ ինձ հետ լինեն. որ իմ փառքը տեսնեն,
որ տուիր ինձ. որովհետև աշխարհքի հիմնելուցն
25 առաջ սիրեցիր ինձ։ Արդար Հայր, աշխարհքը չը
ճանաչեց քեզ. բայց ես ճանաչեցի քեզ, և սո-
26 րանք ճանաչեցին, որ դու ուղարկեցիր ինձ։ Եւ ես
քո անունը ճանաչեցրի նորանց, և կ'ճանաչեցնեմ,
որ այն սէրն, որով ինձ սիրեցիր, նորանցում լինի,
և ես էլ նորանցում։

## Գլ. ԺԸ.

1 Յիսուսը այս ասելուց յետոյ իր աշակերտների
հետ դուրս գնաց Կեդրոն հեղեղատի միւս կողմը,
ուրտեղ մի պարտէզ կար. որի մէջ մտաւ ինքը և
2 իր աշակերտները։ Յուդան՝ նորան մատնողն էլ
գիտէր այն տեղը. որովհետև Յիսուսը շատ անգամ
3 ժողովուել էր այնտեղ իր աշակերտների հետ։ Եւ

Յուդան **զինուորների** գունդը և քահանայապետնե-
րի՛ց և Փարիսեցիներից սպասաւորներ առնելով ե-
կաւ այնտեղ ջահերով և լապտերներով և զէն-
4 քերով: Բայց Յիսուսը՝ երբոր գիտաց այն ամեն
բաները, որ գալիս էին իր վերայ, դուրս եկաւ նո-
5 րանց ասաց. Ո՞ւմ էք ուզում: Պատասխանեցին
նորան. Յիսուս Նազովրեցուն: Յիսուսը նորանց ա-
սաց. Ես եմ: Յուդան նորան մատնողն էլ կանգ-
6 նած էր նորանց հետ: Երբոր ասաց նորանց թէ Ես
եմ, նորանք ետ ետ գնացին, և գետնի վերայ ըն-
7 կան: Եւ դարձեալ հարցրեց նորանց. Ո՞ւմ էք
ուզում. և նորանք ասացին. Յիսուս Նազովրեցուն:
8 Յիսուսը պատասխանեց. Ձեզ ասացի թէ Ես եմ.
արդ թէ որ ինձ էք ուզում՝ թող տուէք դորանց,
9 որ գնան: Որ կատարուի այն խօսքը որ ասաց, թէ
Նորանից որ ինձ տուիր, նորանցից ոչ մէկն էլ չ՚կոր-
10 ցրի: Բայց Սիմոն Պետրոսը, որ սուր ունէր, քաշեց
նորան և քահանայապետի ծառային զարկեց, և
նորա աջ ականջը կտրեց գցեց. և այն ծառայի
11 անունը Մաղքոս էր: Յիսուսն էլ Պետրոսին ասաց.
Սուրդ դիր պատեանի մէջը. այն բաժակը որ իմ
Հայրը տուաւ ինձ, ես այն չ՚խմե՞մ:
12 Եւ **զինուորների** գունդը և հազարապետը և Հրէ-
աների սպասաւորները բռնեցին Յիսուսին, և կա-
13 պեցին նորան. Եւ տարան նորան առաջ Աննայի
մօտ, որովհետեւ Կայիափայի աներն էր, որ այն
14 տարուայ քահանայապետն էր: Սա այն Կայիափան
էր, որ Հրէաներին խրատ տուաւ, թէ Լաւ է մէկ
15 մարդ կորչի ժողովրդի համար: Եւ Սիմոն Պետրոսը
և միւս աշակերտը գնում էին Յիսուսի ետեւից:
Այն աշակերտը ծանօթ էր քահանայապետին, և
Յիսուսի հետ մտաւ քահանայապետի սրահը:
16 Պետրոսն էլ դռան մօտ կանգնած էր դուրսը. այն



միւս աշակերտը, որ քահանայապետին ծանօթ էր,
դուրս եկաւ և դռնապանին ասաց, և Պետրոսին
17 ներս մտցրեց: Եւ այն աղջիկը, որ դռնապան էր,
Պետրոսին ասաց. Մի՞թէ դու էլ այն մարդի աշա-
18 կերտներից ես. և նա ասաց. Չեմ: Ծառաներն ու
սպասաւորներն էլ կանգնել էին՝ կրակ արած, ո-
րովհետեւ ցուրտ էր, և տաքանում էին. Պետրոսն
19 էլ նորանց հետ կանգնած էր և տաքանում էր: Եւ
քահանայապետը Յիսուսին հարցրեց նորա աշա-
կերտների համար և նորա վարդապետութեան հա-
20 մար: Յիսուսը պատասխանեց նորան. Ես յայտնի
խօսեցի աշխարհքին. ես միշտ սովորեցրի ժողովա-
րանումը և տաճարումը, որտեղ ամեն տեղից Հրէա-
ները ժողովվում են, և ծածուկ ոչինչ չխօսեցի:
21 Ի՞նչու ես ինձ հարցնում. լսողներին հարցրու, թէ
ես ինչ խօսեցի նորանց. ահա նորանք գիտեն, ես
22 ինչ եմ ասել: Երբոր նա սա ասաց, սպասաւորնե-
րից մէկը, որ այնտեղ կանգնած էր, Յիսուսին
ապտակ տուաւ և ասաց. Այդպէ՞ս ես պատասխա-
23 նում քահանայապետին: Յիսուսը նորան պատաս-
խանեց. Եթէ չար խօսեցի, վկայիր այն չարի համար.
24 բայց եթէ բարի, ի՞նչու ես զարկում ինձ: Եւ
Աննան նորան կապած ուղարկեց Կայիափա քա-
25 հանայապետի մօտը: Եւ Սիմոն Պետրոսը կանգնած
տաքանում էր. նորան ասացին. Մի՞թէ դու էլ
նորա աշակերտներից ես. Նա ուրացաւ և ասաց.
26 Չեմ: Եւ քահանայապետի ծառաներից մէկը, որ
ազգական էր նորան, որի ականջը Պետրոսը կտրեց,
ասաց. Չէ՞ որ ես տեսայ քեզ այն պարտէզումը
27 նորա հետ: Եւ Պետրոսը դարձեալ ուրացաւ. և
շուտով հաւը խօսեց:
28 Եւ Կայիափայի մօտից Յիսուսին տարան պալա-
տը. և առաւօտ էր. և իրանք չ՚մտան պալատի

29 մէջ, որ չ'պղծուին, այլ որ զատիկն ուտեն։ Եւ
Պիղատոսը դուրս եկաւ նորանց մօտ և ասաց. Այդ
մարդի դէմ ինչ գանգատ էք առաջ բերում։
30 Պատասխանեցին և ասացին նորան. Եթէ սա չարա-
գործ չ'լինէր, ապա նորան չէինք մատնի քեզ։
31 Պիղատոսն էլ նորանց ասաց. Դուք առէք նորան,
և ձեր օրէնքի համեմատ դատեցէք նորան։ Հրէ-
ներն էլ նորան ասացին. Մեզ օրէնք չէ ոչ ոքի
32 սպանել։ Որ Յիսուսի խօսքը կատարուի, որ ասաց,
33 ցոյց տալով թէ ինչպիսի մահով է մեռնելու։ Պի-
ղատոսը դարձեալ մտաւ պալատը, Յիսուսին կան-
չեց և նորան ասաց. Դո՞ւ ես Հրէաների թագաւո-
34 րը։ Յիսուսը նորան պատասխանեց. Դու քեզանի՞ց
ես ասում այդ, թէ ուրիշներն ասացին քեզ ինձ
35 համար։ Պիղատոսը պատասխանեց. Մի՞թէ ես էլ
հրէայ եմ. քո ազգը և քահանայապետները քեզ
36 մատնեցին ինձ. ի՞նչ ես արել։ Յիսուսը պատաս-
խանեց. Իմ թագաւորութիւնն այս աշխարհքիցը
չէ. եթէ իմ թագաւորութիւնն այս աշխարհքիցը
լինէր, ապա իմ ծառաները կռիւ կ'անէին, որ չը
մատնուիմ Հրէաների ձեռը. բայց հիմա իմ թա-
37 գաւորութիւնն այս տեղից չէ։ Պիղատոսն էլ
ասաց նորան. Ապա ուրեմն դու թագաւո՞ր ես.
պատասխանեց Յիսուսը. Դու ես ասում, որ ես
թագաւոր եմ. ես դորա համար եմ ծնուել և ե-
կել աշխարհք, որ ճշմարտութեանը վկայեմ.ա-
մեն ով որ ճշմարտութիւնիցն է, իմ ձայնը լսում
38 է։ Պիղատոսը նորան ասաց. Ի՞նչ է ճշմարտութիւ-
նը։ Եւ այս ասելով դարձեալ դուրս գնաց Հրէա-
ների մօտ և նորանց ասաց. Ես ոչ մի յանցանք չեմ
39 գտնում նորանում։ Բայց եզ սովորութիւն է, որ
զատկին մի մարդ արձակեմ ձեզ համար. արդ
կամենո՞ւմ էք, որ Հրէաների թագաւորն արձա-



40 կեմ ձեզ համար։ Եւ ամենքը դարձեալ աղաղա-
կեցին և ասում էին, Ոչ դորան, այլ Բարաբ-
բային. և այդ Բարաբբան մի աւազակ էր։

## ԳԼ. ԺԹ.

1 Այն ժամանակ Պիղատոսն առաւ Յիսուսին և
2 ծեծեց։ Եւ զինուորները փշերից պսակ շինեցին,
դրին նորա գլխին, և ծիրանի հանդերձ հագցրին
3 նորան։ Եւ ասում էին. Ողջ կաց, ով Հրէաների
4 թագաւոր. և ապտակներ էին տալիս նորան։ Պի-
ղատոսը դարձեալ դուրս գնաց և նորանց ասաց.
Ահա նորան դուրս եմ բերում ձեզ մօտ, որ գի-
տենաք, թէ ես ոչ մի յանցանք չեմ գտնում նո-
5 րանում։ Եւ Յիսուսը դուրս եկաւ, փշեղէն պսա-
կը և ծիրանի հագուստը հագած. և Պիղատոսը նո-
6 րանց ասաց. Ահա այն մարդը։ Երբոր քահանայա-
պետները և սպասաւորները նորան տեսան, աղա-
ղակեցին և ասացին. Խաչի՛ր, խաչի՛ր։ Պիղատոսը
նորանց ասաց. Դուք առէք դորան և խաչեցէք.
որովհետեւ ես յանցանք չեմ գտնում դորանում.
7 Հրէաները պատասխանեցին նորան. Մենք օրէնք
ունինք, և մեր օրէնքի համեմատ պէտք է մեռնի.
8 որովհետեւ իր անձն Աստուծոյ Որդի արաւ։ Երբոր
Պիղատոսն այս խօսքը լսեց, էլ աւելի վախեցաւ։
9 Եւ դարձեալ մտաւ պալատը, և Յիսուսին ասաց.
Դու ի՞նչ տեղից ես. և Յիսուսը չ'պատասխանեց
10 նորան։ Պիղատոսն էլ ասաց նորան. Ինձ հետ չե՞ս
խօսում. մի՞թէ չ'գիտես, որ ես իշխանութիւն ու-
նիմ քեզ խաչելու, և իշխանութիւն ունիմ քեզ
11 արձակելու։ Յիսուսը պատասխանեց. Դու ոչինչ
իշխանութիւն չէիր ունենալ ինձ վերայ, եթէ վե-
րեւից տրուած չ'լինէր քեզ. նորա համար նա որ

12 ինձ մատնեց քեզ, նորա մեղքն աւելի մեծ է։ Եւ
նորանից յետոյ Պիղատոսը ուզում էր նորան ար-
ձակել. բայց Հրէաներն աղաղակում էին և ասում.
Եթէ դորան արձակես, կայսրին բարեկամ չես. ա-
մեն ով որ իր անձը թագաւոր է կոչում, նա կայս-
13 րին հակառակ է խօսում։ Պիղատոսն էլ երբոր
այս խօսքը լսեց, Յիսուսին դուրս բերաւ, և բեմի
վերայ նստեց, այն տեղը, որ Քարայատակ էր կոչ-
14 վում, և Եբրայեցերէն Կաբբաթա։ Եւ զատկի
ուրբաթն էր, ժամը իբր վեցը, և Հրէաներին ասաց.
15 Ահա ձեր թագաւորը։ Իսկ նորանք աղաղակում
էին. Վեր առ, վեր առ, և խաչիր դորան. Պիղա-
տոսը նորանց ասաց. Ձեր թագաւո՞րը խաչեմ։ Քա-
հանայապետները պատասխանեցին. Մենք թագա-
16 ւոր չ՚ունինք բացի կայսրից։ Այն ժամանակ նորան
տուաւ նորանց ձեռը, որ խաչուի։
17 Եւ նորանք առան տարան Յիսուսին. և խաչա-
փայտն ինքը վերկալած, դուրս գնաց այն տեղը, որ
Գագաթն էր ասվում, որ եբրայեցերէն Գողգոթա
18 է կոչվում։ Այնտեղ խաչ հանեցին նորան. և նորա
հետ երկու ուրիշն՝ այս կողմին և այն կողմին, և
19 Յիսուսին՝ մէջտեղը։ Պիղատոսը մի տախտակ էլ
գրեց, և խաչի վերայ դրաւ. և գրուած էր ՅԻ-
20 ՍՈՒՍ ՆԱԶՈՎՐԵՑԻ ԹԱԳԱՒՈՐ ՀՐԷԻՑ։ Եւ այս
տախտակը Հրէաներից շատերը կարդացին. որով-
հետեւ քաղաքին մօտ էր այն տեղը, ուր որ Յիսուսը
խաչուեցաւ. և գրուած էր Եբրայեցերէն, Յունա-
21 րէն և Լատիներէն։ Եւ Հրէաների քահանայապետ-
ները ասացին Պիղատոսին. Մի գրիր Հրէաների թա-
գաւոր, այլ թէ Նա ասաց, թէ Թագաւոր եմ
22 Հրէաների։ Պիղատոսը պատասխանեց. Ինչ որ գրե-
ցի՝ գրեցի։
23 Բայց զինուորներն երբոր Յիսուսին խաչ հանե-



ցին, նորա հանդերձներն առան, և չորս բաժին ա-
րին, ամեն մէկ զինուորի համար մի բաժին. բայց
պատմուճանը՝ որովհետեւ առանց կարի էր, վերեւից
24 վայր բոլորը հիւսուած. Ուստի իրար ասացին. Դո-
րան չ՚պատառենք, այլ վիճակ գցենք դորա վերայ,
թէ ումը լինի. որ գիրքը կատարուի, որ ասում է,
թէ Իմ հանդերձներն իրանց մէջ բաժանեցին եւ
իմ պատմուճանի վերայ վիճակ գցեցին. եւ զին-
ուորներն արին այդ բանը։
25 Եւ Յիսուսի խաչի մօտ կանգնած էին նորա մայրը,
եւ նորա մօր քոյրը՝ Մարիամը Կղէովպայի կինը, եւ
26 Մարիամ Մագդաղենացին։ Յիսուսն էլ տեսնե-
լով իր մօրը եւ այն աշակերտին, որ սիրում էր, որ
մօտիկ կանգնած էր, իր մօրն ասաց. Ով կին, ահա
27 քո որդին։ Յետոյ ասաց աշակերտին. Ահա քո մայրը.
եւ այն ժամանակից այն աշակերտն իրան մօտ առաւ
նորան։
28 Սորանից յետոյ Յիսուսն իմանալով, որ ամեն
բան արդէն լրացած է, որպէս զի գրուածը կատա-
29 րուի՝ ասաց Ծարաւ եմ։ Եւ մի աման կար քացա-
խով լիքն. եւ նորանք մի սպունգ լցրին քացախով
եւ զոպայի մշտիկի վերայ դրած նորա բերանին մօ-
30 տեցրին։ Եւ երբոր Յիսուսը քացախն առաւ՝ ասաց.
Կատարուած է. եւ գլուխը խոնարհեցրեց, հոգին
աւանդեց։
31 Բայց Հրէաները, որովհետեւ ուրբաթ օր էր, որ-
պէս զի մարմինները չ՚մնան խաչի վերայ շաբաթ օրը,
որովհետեւ այն շաբաթ օրը մեծ էր, Պիղատոսին
աղաչեցին. որ նորանց սրունքները ջարդեն, եւ
32 վեր առնուին։ Զինուորներն էլ եկան եւ առաջինի
սրունքները ջարդեցին, այնպէս էլ միւսինը, որ նո-
33 րա հետ խաչուած էր։ Բայց երբոր Յիսուսի մօտ
եկան եւ տեսան նորան արդէն մեռած, նորա

34 սրունքները չ’ջարդեցին: Այլ զինուորներից մէկը
գեղարդով Նորա կողը խոցեց, եւ շուտով արիւն եւ
35 ջուր դուրս եկաւ: Եւ նա որ այս տեսաւ՝ վկայեց.
եւ Նորա վկայութիւնը ճշմարիտ է. եւ նա գիտէ որ
36 ճշմարիտ է ասում, որ դուք հաւատաք: Որովհե-
տեւ այս բաները եղան, որ գրուածը կատարուի, թէ
37 Նորա ոսկորը չ’պիտի փշրուի: Եւ դարձեալ մի ու-
րիշ գրուած ասում է, թէ Մտիկ կ’տան Նորան,
որ խոցեցին:
38 Սորանից յետոյ Պիղատոսին աղաչեց Յովսէփը,
որ Արիմաթիայեցն էր, (որ աշակերտ լինելով Յի-
սուսին, բայց Հրէից վախի պատճառովը ծածկուած
էր) որ Յիսուսի մարմինը վեր առնէ. եւ Պիղատոսը
հրաման տուաւ. եւ նա եկաւ եւ վեր առաւ Յի-
39 սուսի մարմինը: Նիկոդեմոսն էլ եկաւ՝ (որ առաջ
Յիսուսի մօտ էր եկել գիշերով.) եւ զմուռս բե-
րաւ հալուէի հետ խառնած, հարիւր լիտրի չափ:
40 Եւ Յիսուսի մարմինն առան, եւ այն խնկերի հետ
կտաւներով պատեցին, ինչպէս Հրէաներին օրէնք էր
41 պատել: Եւ այն տեղը, ուր որ խաչուեցաւ, մի
պարտէզ կար, եւ այն պարտէզումը մի նոր գերեզ-
42 ման, որ նորանում երբէք ոչ ոք չէր դրուած: Եւ
այնտեղ դրին Յիսուսին Հրէաների ուրբաթի հա-
մար, որովհետեւ գերեզմանը մօտ էր:

ԳԼ. Ի.

1 Եւ միաշաբաթի օրը Մարիամ Մագդաղենացին
առաւօտանց տակաւին մութ՝ գալիս է գերեզմա-
նը, եւ տեսնում է քարը գերեզմանից վեր առած:
2 Ապա վազում է գալիս Սիմօն Պետրոսի եւ միւս ա-
շակերտի մօտ, որին Յիսուս սիրում էր, եւ ասում
նորանց. Տիրոջը վեր առան գերեզմանից, եւ չ’գի-



3 տենք, թէ ուրտեղ դրին Նորան: Եւ դուրս եկաւ
Պետրոսը և միւս աշակերտը՝ և գալիս էին գերեզ-
4 մանը: Եւ երկուսը միասին վազում էին. և միւս
աշակերտը վազեց շուտով անցաւ Պետրոսից. եւ
5 առաջ եկաւ գերեզմանը: Եւ ծռելով տեսնում է
6 կտաւները դրած. բայց ներս չ’մտաւ: Սիմօն Պետ-
րոսն էլ հասաւ որ նորա ետեւից գալիս էր, եւ մտաւ
7 գերեզմանը, եւ տեսնում է կտաւները դրած: Եւ
վարշամակը՝ որ Նորա գլխի վերայ էր, կտաւների
8 հետ չէր, այլ ջոկ ծալած մի առանձին տեղ: Այն
ժամանակ միւս աշակերտն էլ ներս մտաւ, նա որ
առաջ էր գերեզմանը եկել, տեսաւ և հաւատաց:
9 Որովհետեւ տակաւին չ’գիտէին գիրքը, թէ Պէտք
10 է Նա մեռելներից յարութիւն առնէ: Եւ աշա-
կերտները դարձեալ իրանց տունը գնացին:
11 Բայց Մարիամը գերեզմանի մօտ կանգնած էր
դուրսը և լաց էր լինում. եւ լաց լինելիս ծռուեց
12 մտիկ տուաւ գերեզմանի մէջ. Եւ տեսնում է եր-
կու հրեշտակ, սպիտակ հանդերձներով նստած,
մէկը գլխի կողմին, և միւսը ոտների կողմին, որ-
13 տեղ որ Յիսուսի մարմինը դրուած էր: Եւ նորանք
ասացին նորան. Ով կին, ինչու ես լաց լինում. Նո-
րանց ասաց. Նորա համար որ իմ Տիրոջը վեր ա-
14 ռան, և չ’գիտեմ, թէ ուր դրին Նորան: Եւ երբոր
սա ասաց, դարձաւ իր յետին կողմը, և Յիսուսին
տեսաւ՝ կանգնած. և չ’գիտէր թէ Յիսուսն է:
15 Յիսուսը նորան ասաց. Կին, ինչու ես լաց լինում,
ում ես որոնում. Նա էլ կարծելով թէ պարտիզ-
պանն է, ասաց նորան. Տէր, եթէ դու վեր առար
Նորան, ասիր ինձ՝ ուր ես դրել Նորան, որ ես վեր
16 առնեմ Նորան: Յիսուսը նորան ասաց. Մարիամ.
և նա դարձաւ և ասաց նորան. Ռաբբունի, որ կը
17 թարգմանուի Վարդապետ: Յիսուսը նորան ասաց.

Մի դպչիր ինձ, որովհետեւ դեռ չեմ վեր ելել
իմ Հօր մօտ. բայց դու գնա իմ եղբայրներին մօտ,
և նրանց ասիր. Ես վեր եմ ելնում իմ Հօր մօտ
և ձեր Հօր մօտ, իմ Աստուծոյ մօտ և ձեր Աս-
18 տուծոյ մօտ: Մարիամ Մագդաղենացին գալիս է
աշակերտներին պատմում, թէ Նա տեսաւ Տիրոջը,
և թէ Նա այս բաները իրան ասաց:
19 Եւ նոյն օրը, միաշաբաթի իրիկունը, երբոր դռ-
ները փակուած էին. այնտեղ ուր որ աշակերտնե-
րը ժողովուած էին հրէաների վախիցը, Յիսուսը
եկաւ և նրանց մէջ կանգնեց, և նրանց ասաց.
20 Խաղաղութիւն ձեզ: Եւ սա ասելով իր ձեռքերը
և իր կողը ցոյց տուաւ նրանց. և աշակերտներն
21 ուրախացան, երբոր Տիրոջը տեսան: Յիսուսը դար-
ձեալ ասաց նրանց. Խաղաղութիւն ձեզ. ինչպէս
իմ Հայրն ինձ ուղարկեց, ես էլ ձեզ եմ ուղար-
22 կում: Եւ սա ասելով փչեց նրանց վերայ և ա-
23 սաց. Առէք Սուրբ Հոգին: Որոնց մեղքը որ թողէք՝
թողուած կ'լինի նրանց. որոնցը որ պահէք, պահ-
ուած կ'լինի:
24 Բայց Թովմաս, տասներկուսից մէկը՝ Երկուոր-
եակ կոչուածը, նրանց հետ չէր, երբոր Յիսուսը
25 եկաւ: Միւս աշակերտներն ասում էին նրան, թէ
Տիրոջը տեսանք. իսկ Նա ասաց նրանց. Եթէ նորա
ձեռքերումն բեւեռների նշանը չ'տեսնեմ, և
մատս չ'դնեմ բեւեռների տեղը, և իմ ձեռքը չ'կո-
խեմ Նորա կողը, չեմ հաւատալ:
26 Եւ ութ օրից յետոյ աշակերտները դարձեալ
ներսումն էին. և Թովմասն էլ նրանց հետ. Յի-
սուսը՝ դռները փակ լինելով, եկաւ և նրանց մի-
ջումը կանգնեց և ասաց. Խաղաղութիւն ձեզ:
27 Յետոյ Թովմասին ասաց. Բեր քո մատը այստեղ. և
տես իմ ձեռքերը, և քո ձեռքը բեր, և իմ կողը



կոխիր, և մի լինիր անհաւատ՝ այլ հաւատացեալ:
28 Եւ Թովմասը պատասխանեց և ասաց նրան. Ով
29 իմ Տէրը, և ով իմ Աստուածը: Յիսուսը նրան
ասաց. Որովհետեւ տեսար ինձ՝ հաւատացիր. երա-
նի նրանց, որ չեն տեսել և հաւատում են:
30 Յիսուսը ուրիշ էլ շատ նշաններ արաւ իր աշա-
կերտների առաջին, որ չեն գրուած այս գրքումը:
31 Բայց սորանք գրուեցան, որ հաւատաք, թէ Յի-
սուսն է Քրիստոսը՝ Աստուծոյ Որդին. և որ հաւա-
տալով կեանք ունենաք նորա անունովը:

Գլ. ԻԱ.

1 Սորանից յետոյ Յիսուսը դարձեալ իր անձը
յայտնեց իր աշակերտներին Տիբերեայ ծովի եզրին
մօտ. և այսպէս յայտնեց: Միասին էին Սիմօն
Պետրոսը, և Երկուորեակ անուանուած Թովմասը,
և Նաթանայէլը՝ որ Գալիլեայի Կանայիցն է, և Զե-
բեդէոսի որդիքը, և նորա աշակերտներիցն ուրիշ
երկուսն էլ: Սիմօն Պետրոսը նրանց ասաց. Ես գը-
նում եմ ձուկ բռնելու. նրանք ասացին. Մենք էլ
գանք քեզ հետ. գնացին և շուտով մտան նաւը,
4 և այն գիշերը ոչինչ չ'բռնեցին: Երբոր արդէն ա-
ռաւօտ եղաւ, Յիսուսը ծովի եզրումը կանգնած
էր, սակայն աշակերտները չ'ճանաչեցին, թէ Յի-
5 սուսն է: Իսկ Յիսուսը նրանց ասաց. Տղերք, ու-
տելու բան ունիք: պատասխանեցին նրան. Ոչ:
6 Նա էլ ասաց նրանց. Ուռկանը նաւի աջ կողմը
գցեցէք, և կ'գտնէք. նրանք էլ գցեցին, և՝ էլ
չէին կարողանում քաշել ձկների շատութեան
7 պատճառովը: Այն աշակերտը որ Յիսուսը սիրում
էր նորան, Պետրոսին ասաց. Տէրն է Նա: Սիմօն
Պետրոսը երբոր լսեց, թէ Տէրն է, վերարկուն իրան

վերայ առաւ, որովհետեւ մերկ էր, և ինքը ծովը
8 գցեց: Իսկ միւս աշակերտները եկան նաւակով.
որովհետեւ ցամաքիցը հեռու չէին. այլ երկու հա-
րիւր կանգունի չափ, և ուռկանը ձկներովը քա-
9 շում էին: Երբոր դուրս եկան ցամաքը, տեսան ա-
ծուխի կրակ վառած, և նորա վերայ դրած ձուկ և
10 հաց: Յիսուսը նորանց ասաց. Բերէք այդ ձկներից,
11 որ հիմա բռնեցիք: Սիմոն Պետրոսը Նաւը մտաւ և
ուռկանը քաշեց դէպի ցամաքը՝ մեծ մեծ ձկներով
լիքը, հարիւր յիսունեւերեք հատ. և այդքան լինե-
12 լով՝ ուռկանը չ՚պատառուեցաւ: Յիսուսը նորանց
ասաց. Եկէք ճաշեցէք. և աշակերտներից ոչ ով
չէր համարձակում հարցնել, թէ Դու ո՞վ ես. ո-
13 րովհետեւ գիտէին, որ Տէրն է: Յիսուսն էլ եկաւ
և հացն առաւ, և նորանց տուաւ, և նոյնպէս էլ
14 ձուկը: Սա երրորդ անգամն է, որ Յիսուսը իր ա-
շակերտներին երեւեցաւ, մեռելներից յարութիւն
առնելուց յետոյ:
15 Եւ երբոր ճաշեցին, Յիսուսն ասաց Սիմոն Պետ-
րոսին. Սիմոն Յովնանի որդի, սիրո՞ւմ ես ինձ դո-
րանցից աւելի. Նորան ասաց. Այո, Տէր, դու գի-
տես, որ ես սիրում եմ քեզ. Նորան ասաց. Արա-
16 ծեցրու իմ գառները: Դարձեալ ասաց նորան. Սի-
մոն Յովնանի որդի, սիրո՞ւմ ես ինձ. Նորան ասաց.
Այո. Տէր, դու գիտես, որ ես սիրում եմ քեզ
17 նորան ասաց. Արածեցրու իմ ոչխարները: Երրորդ
անգամն ասաց նորան. Սիմոն Յովնանի որդի, սիրո՞ւմ
ես ինձ: Պետրոսը տրտմեցաւ, որովհետեւ երրորդ
անգամ նորան ասաց, թէ Սիրո՞ւմ ես ինձ. և նորան
ասաց. Տէր, դու ամեն բան գիտես, դու գիտես,
որ ես սիրում եմ քեզ. Յիսուսը նորան ասաց.
18 Արածեցրու իմ ոչխարները: Ճշմարիտ ճշմարիտ
ասում եմ քեզ, երբոր պատանի էիր, ինքդ էիր



գօտիդ կապում, և ման գալիս որտեղ որ ուզում
էիր. բայց երբոր կ՚ծերանաս, ձեռքերդ կ՚մեկնես.
և ուրիշը գօտի կ՚կապէ, և կ՚տանէ՝ որտեղ որ չես
19 ուզիլ: Սա ասաց՝ ցոյց տալով, թէ նա ինչ մահով
կ՚փառաւորէ Աստուծուն. և սա ասելուց յետոյ,
20 նորան ասաց. Իմ ետեւիցը եկ. Պետրոսն էլ դար-
ձաւ՝ տեսաւ այն աշակերտին, որին Յիսուսը սի-
րում էր, որ ետեւիցը գալիս էր, նա՝ որ էլ նորա
լանջքովն ընկաւ ընթրիքի ժամանակին և ասաց.
21 Տէր, ո՞վ է քեզ մատնողը: Պետրոսը սորան տես-
22 նելով, Յիսուսին ասաց. Տէր, բայց սա ի՞նչ: Յի-
սուսը նորան ասաց. Եթէ ես կամենում եմ, որ
դա կենայ, մինչև ես գամ, քե՞զ ինչ. դու իմ
23 ետեւիցը եկ: Եւ այս խօսքը դուրս եկաւ եղբայր-
ների մէջ, թէ այն աշակերտը չի մեռնիլ. բայց
Յիսուսը չ՚ասաց նորան. թէ չի մեռնիլ. այլ ե-
թէ կամենում եմ, որ դա կենայ մինչև ես գամ,
քե՞զ ինչ:
24 Սա այն աշակերտն է, որ այս բաների համար
վկայում է, և այս բանն էլ գրեց, և գիտենք, որ
25 նորա վկայութիւնը ճշմարիտ է: Բայց ուրիշ էլ
շատ բաներ կան, որ Յիսուսը արաւ, որոնք եթէ
մէկ մէկ գրուած լինէին, կարծում եմ թէ աշ-
խարհքս էլ բաւական չէր լինիլ այն գրուած գրքերը
առնելու: Ամէն: